


Спецификация
на работу

891.995
2-61

1917



Արմ.

3-1279a

3-1279a

30 MAY 2011

Am-1472

891.994

L-61


904



Ի Զ Ր Ա Ն Ն ՈՒ Ց Ի Բ Օ Ն

Վ. Էպիկ

ՎԱՐԴԱՆ ԼԻՍԻՅԱՆՆԻ



АНВ. № 20555

Բ Ի Ց Լ Ի Ս

Տպարան Ե. Ազանյանի, Պոլից. 7

1914

նային պէտք է թակել... Դու էլի կնոջդ լսիր... Ինչպէս չէ-
նա ուսում առած, համալսարան գնացած, իսկ մայրդ... Էհ...

Եւ բարկացած կտրեց մի անագին կտոր հաց:

Երբ Գերասիմը կնոջ սենեակը մտաւ, լացը կտրւեց:
Սենեակի մէջտեղ կանգնած էր իր կինը և յուսահատ դէմքով
նայում էր յատակին ընկած փոքրիկ տղային, որը իր գլուխը
ձեռներով մէջթաղած լալիս էր:

— Փառք Աստծու, դու
եկար, — բացականչեց կինը՝
ամուսնուն տեսնելով.— Ի՞նչ
անեմ Միհրանին՝ չըզիտեմ,
արդէն մի քառորդ ժամ կը-
լինի, որ չեմ կարողանում հան-
գատացնել:

— Լաւ, ինչո՞ւ է լալիս, —
ասաւ ամուսինը ու կրա-
նալով տղայի ու-
սը շարժեց և
հարցրեց.

— Այ պատիկ,
ինչո՞ւ ես լալիս:

Փոքրիկը, փո-
խանակ պատաս-
խանելու, սկսաւ
էլ աւելի դառն,
էլ աւելի ուժգին
լալ, կարծես մի
անսահման կսկիծ
պոռնոգէ պոռնոգ
լցրել էր հոգին:



— Կարծեմ ինչ որ լակոտների համար է լալիս, — մէջ
մտաւ կինը. — ասում էր՝ տարել են ծովն են գցել, խեղդել...
Վերջին օրերը շարունակ այդ լակոտների մասին էր խօսում
և նրանց պատճառով ամբողջ ժամանակ բախուժում էր անց կա-
ցնում...

— Ահ, այդ մեր սև շան լակոտները կը լինեն, — գլխի
ընկաւ հայրը. — դու հրամայել էիր, որ նրանց տանեն...

— Ոչ, — պատասխանեց կինը:

— Պէտք է կանչել Խէչօին, նա կիմանայ, — ասաւ հայրը
և շտապով դուրս գնաց:

Մի քանի վայրկեան անց նա դարձեալ ներս մտաւ ա-
սելով.

— Իսկոյն կը գայ:

Նրանք մի քանի րոպէ մնացին լուռ: Երկուսն էլ մտա-
գբաղ, դէմքերը խոժոռած դիտում էին տղային, որ դարձեալ
պառկած իր առաջւայ տեղը, առանց երեսը ցոյց տալու, լա-
լիս էր՝ այժմ աւելի կամաց, յոգնած, խանձւած ձայնով,
հեծկտալով, երբեմն բոլորովին դադարելով:

Խէչօն շտապով ներս մտաւ:

Դա մի միջահասակ, բայց ուժեղ և ամրակազմ տղա-
մարդ էր, կուշ եկած աչքերով ու հազիւ նշմարելի մշտական
բարի և տըխուր ժպիտով:

Խէչօն գարմացած և ուշադրութեամբ նայեց յատակի
վրա ընկած տղային: Սակայն նա ոչ վախեցաւ թէ տղային
բան է պատահել, ոչ էլ վշտացաւ, տեսնելով նրա արտա-
սուքները: Միայն նրա աչքերը խորամանկ կերպով աւելի
կուշ եկան, իսկ նրա ժպիտը մի րոպէ դառաւ աւելի
նշմարելի և քնքուշ: Նա հասկանում էր կարծես մանուկի ար-
տասուքների գաղտնիքը և ոչ միայն ներողամիտ էր, այլ և
զմայլուում էր այդ արտասուքներով:

Երբ Միհրանը, լսելով Խէչօյի ներս մտնելը, բարձրացրեց
իր գլուխը, Խէչօն գաղտնի նշան արաւ նրան ձեռքով: Բայց
Միհրանը իսկոյն նորից թագցրեց իր երեսը:

Խէչօն կը մօտենար տղային, եթէ պարոնն ու տիկինը այրտեղ չը լինէին: Այժմ նա մնաց դռան մօտ սպասելով ինչ կասեն իրան:

— Խէչօ, դու չը գիտես, ինչո՞ւ է լալիս Միհրանը, — հարցրեց կարելեանը:

— Ես որ չը գիտենամ, էլ ո՞վ պիտի գիտենայ, նրա հոգուն մեռնեմ, — պատասխան տուաւ Խէչօն ժպտալով: — Էն շան լակոտները համար է լալիս:

— Ի՞նչ եղան լակոտները:

— Մեծ խանութը հրամայեց, որ տանեն, գէն գցեն. առաւ մէկ շուն ունենք՝ հերիք է. էս լակոտները ճւղջը լսելու ու նրանց պահելու գլուխ չունեմ, — պատասխանեց ծառան:

Միհրանը, որ գլուխը բարձրացրել էր և ուշադրութեամբ ականջ էր դնում, վեր թռաւ յանկարծ յատակից ու մոռանալով իր արտասուքները՝ բացականչեց.

— Չարն է տատը, չարը:

— Դու չը պէտք է այդպէս ասես, Միհրան, մի մոռանայ, որ նա տատդ է: Եւ նա շատ ճիշտ է ասել. մէկ շուն ունենք, բաւական է, — նկատեց մայրը խիստ կերպով:

— Բայց, մայրիկ, նրանք այնպէս լաւ լակոտներ էին... Նրանց մայրիկը կաթն էր տալիս... Ախ, նրանց մայրիկը այսօր այնպէս էր լալիս... Տատն առաւ, որ նրանց տանեն ծովը գցեն... — Ու նա նորից սկսեց հեկեկալ:

— Բաւական է, բաւական է, — հանդստացնում էր մայրը, — ես քեզ համար ուրիշ շնիկ կառնեմ, կուզե՞ս...

— Չէ, մայրիկ, ես այդ լակոտներին եմ ուզում... Ախ, այնանց մէկը կար այնպէս լաւը, սպիտակ գնչով ու սպիտակ թաթիկներով, իսկ միւսը՝ բոլորովին սև... Մէկն էլ միշտ կուռում էր... Մայրիկ, ո՞ւր գցեցին նրանց. թող ինձ, գնամ նրանց բերեմ... Ասա Խէչօին, գայ ինձ հետ...

Մայրն ու հայրը մի լուռ հայեացք նետեցին իրար վրա:

— Խէչօն կերթայ ու կը բերի, — ասաւ մայրը, — այսօր շատ ցուրտ է:

— Չէ, մայրիկ, Խէչօն չի գտնի: Ես ուզում եմ ինքս բերեմ նրանց, — թախանձում էր տղան:

— Խէչօ, դու գիտես՝ ուր են լակոտները, — հարցրեց հայրը:

— Հայրիկ, հայրիկ, թող որ ես բերեմ նրանց, — ընկաւ Միհրանը հօր գիրկը:

— Լաւ, սպասիր դեռ իմանանք՝ ուր են, — ասաւ հայրը մօր հետ ժպտալով:

— Պէտք է հարցնել դռնապանին, նա է տարել, — պատասխան տուաւ Խէչօն:

— Գնանք, Խէչօ, գնանք իմանանք՝ ո՞ւր են տարել, — բացականչեց տղան ուրախ, բռնելով Խէչօի ձեռքից և քաշելով դէպի դուռը:

— Սպասիր, Միհրան, Խէչօն կերթայ, իսկ դու դեռ պէտք է ճաշես, յետոյ կարող ես գնալ ու լակոտները բերել, — ասաւ հայրը:

— Չէ, ես այս րոպէիս պիտի գնամ, այս րոպէիս, — կրկնում էր տղան ոտը յատակին խփելով:

Բայց հայրը ոչ մի կերպ չը համաձայնեց:

Միհրանը ստիպւած էր հնազանդել:

Ամբողջ ընտանիքը նստած էր սեղանատանն ու ճաշում էր: Միհրանը հագիւ էր գալում իրան ու տեղը նստած մնում: Խէչօն գնացել էր դռնապանից իմանալու՝ ո՞ւր է տարել ձագերը... Հայրն ու մայրը ժպտալով նայում էին տղային: Թէև նա ոչինչ չէր ուտում, նրան բան չէին ասում: Երկուսն էլ ուրախ էին, տեսնելով որդու այդ արտասուքներն ու յուզմունքը:

Մենակ տատն էր նստած խոժոռած դէմքով և ոչինչ չէր ասում:

Վերջապէս մեծերը վեր կացան ճաշից: Միհրանը այլևս չէր կարողանում իրան զսպել. Խէչօն եկել էր ասելու, որ լակոտները տարել են գետի ափ:

Մայրը հագցրեց Միհրանին, լաւ փաթաթեց նրա վիզը ու գլուխը, խրատեց որ գետին չը մօտենայ, Խէչօին չը թողնի, համբուրեց, մի քանի բան էլ Խէչօին ասաւ ու վերջապէս ճամփայ դրաւ:

Չեռք ձեռքի տւած, տաք տաք խօսելով դուրս եկան նըրանք փողոց: Տղան գրեթէ վազում էր:

—Մի վազի, հոգուդ մատաղ, կը հասնենք, կը հասնենք,— կրկնում էր ծառան ժպտը դէմքին:

—Խէչօ, ի՞նչպէս ես կարծում նրանք մեռած չէ՞ն լինի, —հարցնում էր տղան գլուխը վեր քաշելով ու Խէչօյի երեսին նայելով:

—Չէ, քեզ մատաղ, չէ,—պատասխանում էր նա.—բոլորին կը գտնենք. դռնապանն ասաւ որ նրանց շուրը չի գըցել, թողել է ափին...

—Իսկ եթէ նրանք մեռել են սովից... Ախ, նրանք անպատճառ մեռած կը լինեն, անպատճառ...

Խէչօն լսում էր: Նա շատ կուզենար, որ լակոտները կենդանի լինէին. նա գիտէր՝ որքան պիտի վշտանայ տղան, եթէ նրանց կենդանի չը գտնի: Բայց նա վախում էր որ թոյլ, նոր ծնւած լակոտներին սրբած տարած կը լինեն **ալեկոծւող գետի ալիքները...** Նա սկսում էր անհանգստանալ: Այժմ նա քայլում էր աւելի արագ, քաշ տալով իր հետ Միհրանին:

Նրանք գնում էին շատ երկար: Անցնում էին նեղ, անյայտ փողոցներով, ուր Միհրանը երբէք չէր եղել, կամուրջներով, աղմկող գործարանների և գետի կեղտոտ ափերի մօտով: Նրանց մօտով, ահագին զրզոց հանելով, սլանում էին կառքեր, անցնում էին հազարաւոր օտար մարդիկ, որոնք երբեմն հրում էին նրանց. ամենքը շտապում էին իրանց գործին:

Այս ամենը խլացնում և շլացնում էր Միհրանին. նա ու-

շաղրութեամբ ու զարմանքով դիտում էր իր շուրջը և սաստիկ քամու բարձրացրած փոշուց պաշտպանւելով՝ աւելի պինդ բռնում էր Խէչօի թևից: Այդ աղմկալից, տարօրինակ փողոցներն ու տեսարանները գրգռում էին նրա երեւակայութիւնը և աւելի խորհրդաւոր դարձնում նրան ճամփորդութիւնը:

Ապա, նաւահանգստին դեռ չը մօտեցած՝ Խէչօն ու տղան շեղւեցին կողքի փողոցներից մէկը ու սկսեցին գնալ խառն ի խուռն դասաւորւած տների միջով, նեղ ճանապարհներով:

Վերջապէս հեռուում լսեց լայն գետի մռնչիւնը, որ քանի գնում աստիկանում էր: Միհրանն ու Խէչօն մի փողոց էլ անցան, մէկ անգամ էլ ծուեցին և տեսան գետափը:

Գետը, որ մի քանի վերստ այգտեղից հեռու թափւում էր ծովը, շատ անհանգիստ էր: Ջրի երեսին, ամեն կողմ, ուր կտրում էր աչքը, վազում էին սպիտակ կոհակներ, որոնք փախչում էին դէպի հեռուն և անհետանում: Նրանց ետևից յայտնւում էին նորերը... և այդպէս անվերջ: Հեռուում շոգեհաւի ծուխ էր երևում և ձկնորսի առագաստ: Ափը ամայի էր և անհամբոյր: Նա ամբողջովին ծածկւած էր մանր, աղի աւազով. շուրջը ոչ մի կանաչ, ոչ մի բոյս:

Երբ Միհրանն ու Խէչօն ջրին մօտեցան, ալիքը սրսկեց նրանց իր թաց փոշով և փչեց նրանց վրա իր սառը հոտը:

Ալիքները գալիս էին հեռւից, հետզհետէ ուռչելով, մեծանալով. նրանք կատաղի թափով զարնում էին աւազին և մանր քարերին, փուռում նրանց վրա և հասնելով մի որոշ կէտի՝ կարծես կանգ առնում և ապա նահանջում ու անհետանում գետի մէջ...


Երկար զուր փնտրեցին նրանք լակոտներին: Միհրանը յուսահատւել էր. —նրա աչքերը լցւել էին արատաւքներով: Խէչօն էլ նրանից պակաս անբախտ չէր զգում իրան: Նա դէս էր ընկնում, դէն էր ընկնում, և չը գտնելով ձագերը, կրկնում էր շարունակ.

— Դարդ մի անի, հոգուդ մեռնեմ, էս է՛ կը գտնենք, ուր որ է՛ կը գտնենք...

Նրա շրթունքներին երևում էր մի շփոթւած, կարծես մեղաւոր ժպիտ, իսկ աչքերը լայն բացւել էին և յօնքերը բարձրացել:

Յանկարծ մի թոյլ վագստոց լուեց: Երկուսն էլ վազեցին դէպի ձայնի կողմը:

Սև, սպիտակ դնչով ու թաթիկներով լակոտը ընկած էր



մի փոսի մէջ: Նրա փոքրիկ մարմինը ամբողջովին թաց էր եղել ծովի կաթիլներից և դողում էր ցրտից: Լակոտի ծուռ, բարակ ոտները հագիւ էին պահում ծանր մարմինը, և նա անհաստատ, ցնցւող շարժումներով խոթում էր կոյր դուռնչը կարմիր քթով մէկ այս, մէկ այն կողմ ու կողկոնձում թոյլ, աղիողորմ:

— Միհրան, Միհրան, գտայ, գտայ, — կանչեց նա ու վերցնելով խեղճ լակոտը՝ վազեց դէպի աղան:

— Ասում էի. դարդ մի անի: հրէս գտանք, հրէս գտանք, — ուրախանում էր նա, և սկսեց սլատմել թէ որտեղ գտաւ:

Միհրանը իսկոյն իր ձեռն առաւ լակոտը, սկսեց նրա թաց մազերը թևով սրբել և կրկնում էր միայն.

— Ախ, սա հէնց իմ սիրած լակոտն է, սպիտակ թաթիկներով ու սպիտակ դնչով: Որքան կուրախանայ սրա մայրիկը:

Կրկնում էր և համբոււում նրա գլուխը: Լակոտը զգալով ձեռների ջերմութիւնը և կարծելով թէ իր մայրն է, վստահութեամբ սեղմւում էր աղային ու կարծես ծիծ էր փնտրում:

— Բայց ո՛ւր են միւսները, — բացականչեց յանկարծ Միհրանը:

— Նրանց էլ կը գտնենք, նրանց էլ կը գտնենք, — ասաւ Սէջօն, թէ և ինքը լիովին համոզւած էր, որ մէկը բաւական է և որ ժամանակ է տուն վերադառնալու:

Նրանք սկսեցին նորից փնտրել: Էլի երկուսը պիտի լինէին:

Միքիչ որ անցան, նրանց էլ գտան: Բայց նրանք արդէն կենդանի չէին. ընկած էին աւազի վրա, խեցիների և ազրի հետ, կիսով չափ ջրով ծածկւած: Խեղճերը, երևի առանց գիտենալու իրանց սպառնացող վտանգը, իրանց կոյր տեղով մօտեցել էին ափին այնքան, որ ալիքը հասել էր նրանց, խեղդել ու ահա խաղացնում էր նրանց անշունչ մարմինները, մէկ քաշելով դէպի գետը, մէկ էլ նորից դուրս ձգելով աւազի վրա:

Հետևեալ ալիքները երևի կըբռնէին ու կըտանէին երկուսին էլ իրանց հետ՝ դէպի խորքը:

Ճար չը կար: Պէտք էր բաւականանալ մէկով և գնալ տուն: Լակոտը սկսել էր նորից վնաստալ: Նա շատ սոված պիտի լինէր: Միհրանն ու Սէջօն վճռեցին տուն շտապել:

Միհրանը ախուր էր. նա չէր կարողանում մոռանալ մնացած երկու լակոտները: Սակայն հետզհետէ նրա ձեռքին եղած ցած երկու լակոտները:

Այն, այդ սպիտակ կինը... նա միշտ Միհրանի աչքի առջևն էր, միշտ գգուում, խնամում էր նրան: Այժմ Միհրանը մայրիկ է ասում նրան. բայց նա մնացել է նրա համար նոյն սպիտակ կինը, նոյն ոգին:

Մի այլ յիշողութիւն ևս ունէր Միհրանը այդ նոյն օրերից: Երբեմն, երբ նա պառկած էր լինում, նրա սենեակն էր մտնում մի շոր, տգեղ պառաւ կնիկ, միշտ սևեր հագած, միշտ շապող ու անհանգիստ, միշտ բղաւող ու դժգոհ:

Նա Միհրանին չէր մօտենում. նա ներս էր գալիս ու նորից հեռանում, իր ետևից մի կծու, բռնոթու հոտ թողնելով: Այդ պառաւը ինչ որ բան էր ասում սպիտակ կնոջը և Միհրանը զգում էր, որ կինը տխրում է... Երբ Միհրանը մեծացաւ, նա իմացաւ, որ պառաւը իր հօր մայրն է, իր տատը:

Միհրանի հայրը՝ Գերասիմ Կարելեանը բաւականին հարուստ մարդ էր: Նա պատահել էր իր կնոջը՝ Մարիամին Պետերբուրգում, ուր այդ աղջիկը ուսանողուհի էր: Նրանք սիրեցին իրար և վճռեցին ամուսնանալ: Սակայն այդ ամուսնութեան դէմ էր Գերասիմի մայրը, որովհետև Մարիամը աղքատ ծնողների զաւակ էր: Այդ էր պատճառը, որ նա ըսկսել էր ատել իր հարսին, միշտ վիրաւորում էր նրան և ամեն բայլափոխում յիշեցնում որ նա աղքատի աղջիկ է ու իր հետ բաժինք չի բերել:

Երբ Միհրանը բոլորովին փոքր էր, նրա թագաւորութիւնը այն սենեակն էր, որտեղ նրա մահճակալն էր դրւած: Այստեղ էր անց կացնում նա ժամանակը, զբաղւած իր խաղալիքներով, մի բան շինելով կամ մի բան գննելով: Թէև նա դուրս էր գալիս իր սենեակից, գնում էր երբեմն զբօսներու, բայց նրա իսկական աշխարհը այդ սենեակն էր:

Բայց այդ երկար չը տևեց: Շուտով Միհրանը սկսեց տաղտկութիւն զգալ իր սենեակի մէջ, ուր ամեն բան, նոյն իսկ

յատակի աննշան մի ճեղք կամ պատի մի խազ արդէն ծանօթ էր նրան: Այն ինչ դուրսը, ուրիշ սենեակներում դեռ սրբան հոբ, անյայտ, խորհրդաւոր բաներ կային: Միհրանը այնտեղ շատ չէր եղել և չէր հետաքրքրւել: Բայց այժմ նրան քաշում գրաւում էին այն սենեակները:

Որքան հետքերական էր, օրինակի համար, հայրիկի առանձնասենեակը՝ մեծ սեղանով, բաղմաթիւ գրքերով, պահարաններով, արկղներով. Միհրանը կուզէնար բաց անել դրանցից ամեն մէկը, քրքրել, տեսնել այնտեղ՝ ինչ կայ: Կամ կիսախաւար դահլիճը՝ ծանր վարագոյրներով, փափուկ գորգերով, զահաւորակներով, արմաւենիներով և ուրիշ բոյսերով: Այնտեղ կային նաև պարսկական թախտեր մութաքաներով ու բարձերով, պատերին քաշ էին արած պատկերներ...

Դեռ շատ ծակ ու ծուկեր, մառաններ և ուրիշ մութ ու փոշոտ տեղեր կային, որ քաշում էին Միհրանի հետաքրքրութիւնը իրանց անյայտութեամբ ու խորհրդաւորութեամբ: Որքան աւելի մութ, անյայտ, ամենքի ուշադրութիւնից հեռու ու մոռացւած էր մի որևէ անկիւն կամ տեղ, այնքան աւելի էր գրաւում Միհրանին:

Միհրանը սկսեց թափառել սենեակից սենեակ, բարձրանալ թախտերի ու աթոռների վրա, մանել բաղմոցների ու սեղանների տակ, քրքրել արկղներ ու պահարաններ, ամեն բան գննել, ամեն բան քննել: Էլ քունջ չը մնաց, ուր քիթը խոթած չը լինէր: Ի՞նչքան բան շուռ տւաւ, կոտորատեց, փշրեց... Իր մայրը շատ էր չարչարւում այն ժամանակ, միշտ նրան հետևելով, որ բան չը փշաջնի, մի տեղ չը մտնի, ուր իր տեղը չէ: Իսկ պառաւ տատի գայրոյթին ու վրդովմունքին էլ հօ չափ ու սահման չը կար:

Շուտով Միհրանը ամեն բան դիտէր: Նրան ծանօթ էին այժմ բոլոր սենեակները և այնտեղ գտնուող բոլոր առարկաները: Նա գիտէր այդ առարկաներից այժմ շատ աւելի, քան մեծերը:

Մեծերից ո՞վ էր իմանում, օրինակ, որ հայրիկի սեղանի ստներից մէկի ետևի կողմում մի խազ կայ գորտի նման: Կամ որ դահլիճի գահաւորակներից մէկը գնդգնդում է, եթէ վրան նստես ու թռչկոտես: Կամ որ փեղկերից մէկի ետև սարդի ոստայն կայ հիւսւած ու վրան մի սև, չորացած ճանճ: Գուցէ գիտէին էլ, բայց չէին յիշում, իսկ Միհրանի համար այդ ամենը մեծ նշանակութիւն ունէր. նա ապրում էր դրանցով:

Շատ չը տեսց, Միհրանը սկսեց այդ սենեակներից էլ ձանձրանալ. այժմ ամեն ինչ ծանօթ էր, և բնակարանը նրան նեղ ու տաղտկալի էր թւում:

Այդ ժամանակ նա գնում էր արդէն մանկական պարտէզ:

Դահլիճում, թախտերից մէկի գլխին կախ էր արած մի մեծ դահլիճ: Այդ դահլիճայի կաշւի վրա մինկար էր նախշած: Այդ նկարը Միհրանը սիրում էր մայրիկի հէքեաթներից ոչ պակաս: Շատ անգամ բարձրանում էր նա թախտի վրա ու երկար նայում նկարին, զանազան բաներ երևակայելով:

Մի թովիչ լուսնեակ գիշեր էր նկարւած. լուսնի կապոյտ շողերը լուսաւորում էին հեռաւոր սարերը, անտառն ու կանաչ հովիտը: Հովտում աւերակներ էին երևում: Կիսակործան պատերի ու մամուռ քարերի մէջ, մի խարոյկի շուրջ նստոտել էին ինչ որ մարդիկ ետփնջներով, բարձր փափախներով ու հրացաններով. նրանց ձիերը արածում էին հովտում:

Ո՞վքեր էին այդ մարդիկ և ինչո՞ւ էին նրանք այդ աւերակներում, գիշերը: Գուցէ նրանք աւազակներ էին... Կամ հովիւներ... Միհրանը նախանձում էր նրանց: Նա կուզենար նրանց պէս լինել:

Իսկ այդ սարերը և այդ գիշերը: Թէև Միհրանը տեսել էր իսկական սարեր և իսկական գիշեր, բայց այդ նկարած սարերն ու գիշերը նրան շատ աւելի էին գրաւում. նա սի-

30727-63

րում էր նրանց շատ աւելի... Միհրանը շատ ընկերներ չունէր: Նրա մշտական ընկերն էր Խէչօն, իսկ յետոյ՝ նաև Յիբօլէրօն:

Խէչօն՝ Կարելեանների հին ծառան էր, որ դառել էր տան մարդ, գրեթէ ընտանիքի անդամ: Նա մոզդոկցի էր: Մտել էր Միհրանի պապի մօտ ծառայութիւն դեռ տղայ հասակում, և որպէս հասակակից՝ մանկութեան ընկեր էր Գերասիմ Կարելեանին, Միհրանի հօրը: Ո՞րքան զփութիւններ են արել միասին այն օրերում...

Այժմ Խէչօն Միհրանի դայեակն էր և ամեն կերպ աշխատում էր ընկերութիւն անել նրան: Նա տուն, ընտանիք չուներ. մի քոյր ունէր Մոզդոկում, բայց վաղուց է նրան չէր տեսել: Իր հոգու ամբողջ քնքշութիւնն ու սիրելու պահանջը նա դարձրել էր փոքրիկ Միհրանի վրա, որին ծառայում էր նոյն հաւատարմութեամբ, ինչպէս ծառայել էր նրա հօրն ու պապին: Փոքրիկը ծնւել էր նրա աչքի առջև և նրա ձեռքին էր մեծացել: Ոչ մի դայեակ չէր կարողանայ նրա տեղը բռնել, այնպիսի համբերութեամբ և հմտութեամբ ընամում էր նա մանուկին: Պէտք էր տեսնել թէ ինչպիսի ցնծութեամբ էր վերաբերւում Միհրանի բոլոր արարքներին և թոթովանքներին. ինչպէս ուրախանում էր նա, երբ Միհրանի առաջին ատամը երևաց կամ երբ նա սկսեց ման գալ և խօսել: Աստուած չանի, եթէ մէկը մի բանով վշտացնէր տղային կամ նրա մասին մի վատ խօսք ասէր—սկսում էր ամբողջ հոգով ատել այն մարդուն:

Երբ տղան վեց տարեկան դարձաւ, նրան տւին մանկական պարտէզ: Խէչօն մի առանձին հպարտութեամբ տանում էր նրան այնտեղ: Միհրանը մի քանի ամիս մնաց բերում էր նրան այնտեղ: Միհրանը մի քանի ամիս մնաց մանկական պարտէզում, սովորեց զանազան երգեր և արդէն շինում էր փոքրիկ բաներ կաւից, խմորից, թղթից, ծղնօտից, և այլն: Խէչօն ամենից հիանում էր, գովում էր անվերջ և շարունակ կրկնում, որ Միհրանից ընդունակ և խելօք տղայ աշխարհիս երեսին չը կայ:

Խէչօն շատ երգեր գիտէր, մանաւանդ տխուր դարիբու-



թեան երգերից, շատ պատմութիւններ էր իմանում, և Միհրանը սիրում էր նստել նրա մօտ, երբ նա, որևէ աշխատանք կատարելիս, երգ էր ասում կամ մի բան պատմում:

Խէչօն էր, որ իմանում էր Միհրանի բոլոր փոքրիկ դադանիքները և նրա հետ անկեղծ ուրախանում Յիբօի օրէցօր մեծանալու, արագ վազելու, գիլ հաչելու վրա:

Այսպէս էր ապրում փոքրիկ Միհրանը՝ անփոյթ ու անխռով, երբ մէկ առաւօտ զարթնելով՝ նա զարմանքով նայեց իր շուրջը, չը կարողանալով հասկանալ թէ ինչ է պատահել:

Ամենքը անհանգիստ էին, շտապում էին. շորեր, գորգեր, պատկերներ թափթփած էին անկարգ դէս ու դէն, մտնում էին ու դուրս գալիս անծանօթ մարդիկ, արկղներ ու կապոցներ էին բերում, տանում, հաւաքում, դարսում, կապկպում...

Վերջապէս նրան ասին, որ պէտք է գնան երկաթուղով ուրիշ քաղաք, հեռու, հեռու և էլ չը վերագառնան:

Միհրանի հայրն ու մայրը վճռել էին գնալ Բագու: Այնտեղ պարոն Կարելեանը մտադիր էր նաւթային հորեր գնել և փորձել իր բախտը:

Մի քանի օրից յետոյ նրանք մնաս բարև ասին տատին ու իրանց հին պապենական տանը և ճամփա ընկան: Խէչօն ու Յիբօն նրանց հետ էին:

Այսպէս վերջացաւ Միհրանի կեանքի առաջին շրջանը:

Գ Լ Ո Ւ Ն Գ .

Կ Ն Տ Ո Ր Ա Ծ

Փետրւար էր: Բագու քաղաքում տարօրինակ բաներ էին կատարւում: Կեանքը մարել էր: Սոսկում էր իջել քաղաքի վրա: Գազանացած, արիւնարբու մարդիկ կոտորում էին իրանց հինաւուրց, շար կտրած դրացիներին, սպանում, այրում, թալանում, մահ ու կործանում տարածում չորս կողմ: Վայրենի աղաղակ, աղերսանք, նզովք էր բարձրանում դէպի դառնաաղաղակ, աղերսանք, նզովք էր բարձրանում, ինչ պատճառով շունչ երկինք: Ինչո՞ւ համար էին կոտորում, ինչ պատճառով — ոչ ոք չը գիտէր. անհասկանալի, մութ շշուկներ էին պլտտում՝ մէկը միւսից անմիտ, ցնորական ու անհաւատալի:

Աղէտը վրա հասաւ տարօրինակ արագութեամբ. ոչ ոք նրան չէր սպասում: Տղամարդիկ ցրւել էին իրանց գործերով. երեխաները գնացել էին դպրոց. մայրերն ու կանայք հանգիստ սկսել էին իրանց ամենօրեայ աշխատանքը. ճաշ էին եփում, կարում, կարկտնում... Երբ յանկարծ սկսեց...

Սկզբում ոչոք չըգիտէր՝ ինչու՞ն է բանը: Հեռւից ինչ որ չըխկչըխկոց էր լսում, կարծես կարկուտ տեղալիս լինէր թիթեղէ տանիքների վրա: Խուլ աղմուկ էր գալիս: Շուտով երևացին փախչող, յուսահատ, ճշացող մարդիկ, որոնք օգնութիւն, ապաստան էին աղերսում ու տարածում էին անուելի լուրը թէ թուրքերը կոտորում են հայերին:

Մնցնում էին ժամեր, տագնապը քանի գնաց մեծացաւ, նոր թաղերով անցնելով: Ոստիկանութիւն, զօրք չէր երևում: Սանձարձակ, գինւած խուժանը փոթորկում էր հրացաններ պարպելով, հրդեհելով, թալանելով հայերի խանութները:

Հայերը տեղ տեղ միայն եզակի ընդդիմադրութիւն էին ցոյց տալիս, որը չէր կարող սակայն սաստել կատաղած ամբոխը ու վերջ դնել շարդին, այլ ընդհակառակը, աւելի էր զայրացնում յարձակողներին: Օգնութիւն չըկար:

Զարհուրանք էր մտել բոլոր տները: Ուրախ չէր այդ օրը և Պետրոսեանի ընտանիքը: Հայրը չըկար: Նա վաղ առաւօտեան դուրս էր գնացել տնից ու առանց բան կասկածելու դիմել էր խանութը: Անցել էին ժամեր, օրը ճաշ էր դարձել, շատ փախստականներ էին վազէվազ անցել տան առջևից, խանութի կողմից, իսկ նա չըկար ու չըկար:

Աննա Պետրոսեանը կծկւել էր իր երկու երեխաների հետ ետևի սենեակներից մէկում, փակել էր փեղկերն ու դռները և սպասում էր: Բացի այն, որ ամուսինը չըկար, վտանգը անմիջապէս իրանց էլ էր սպառնում: Երեխաները լուռ էին. նրբանք յոգնել էին արտասուելուց ու յուզւելուց և նիրհում էին: Մայրն էլ գտնուում էր մի շար դրութեան մէջ, չըգիտենալով՝ ի՞նչ անի, ինչպէս իմանայ իր ամուսնու վիճակը:

Մէկը միևնից աւելի ծանր մտքեր անցնում էին նրա գլխով:

—Տէր Աստուած, իսկ եթէ նրան սպանած լինեն... Այս մտքից նա ցնցւեց, ընկաւ թախտի վրա և սկսեց հեկեկալ:

Այդ բոպէին փողոցում իրանց պատուհանի տակ արաքոցներ լսւեցին: Աննան սոսկաց: Երեխաները զարթնեցին ու ըսկսեցին լալ: Մայրը վազեց նրանց մօտ և ուժգին գրկեց նրանց:

—Իմ բալիկներս, մի վախէք, մեզ ձեռք չեն տայ, մեր տանտէրը թոյլ չի տայ, — հանգստացնում էր նա:

Բայց մանուկները շարունակում էին ջղաձգօրէն լալ:

—Մայրիկ, հայրիկը չեկաւ:

—Նա շուտով կ'ըգնի:

—Մայրիկ, հայրիկը չեկաւ, — ասաւ մայրը ականջ դնելով իր անուկին և դողալով: Փողոցում լսուած խոսքերն արթնացնում էին նրան:

—Մայրիկ, հայրիկը չեկաւ, — ասաւ մայրը ականջ դնելով իր անուկին և դողալով: Փողոցում լսուած խոսքերն արթնացնում էին նրան:

—Մայրիկ, հայրիկը չեկաւ, — ասաւ մայրը ականջ դնելով իր անուկին և դողալով: Փողոցում լսուած խոսքերն արթնացնում էին նրան:

— Խանութը ինչներնիս է պէտք, — ասաւ եօթը տարեկան Շուշիկը. — Թող հայրիկը գայ...

— Եթէ ես մեծ լինէի, ես ոչ ոքի չէի լսի. կը վերցնէի հրացան, ատրճանակ ու թուր, կերթայի ու հայրիկին կազատէի, — ասաւ նրա եղբայր՝ Սուրէնը, ոգևորւելով. նրա դէմքը փայլում էր և աչքերը շողշողում էին: — Հայրիկը հրացան չունի, նա ինչպէս պէտք է պաշտպանի մեր խանութը:

— Ինչո՞ւ են ուզում սպանել հայրիկին. հայրիկը այնպէս լավ է, — հարցրեց Շուշիկը մի քիչ մտածելուց յետոյ:

— Դու յիմար ես, — ասաւ Սուրէնը. — այսօր թուրքերը սպանում են բոլոր հայերին:

Նա իր քրոջից մի քիչ մեծ էր:

— Բայց ինչո՞ւ են նրանք սպանում բոլոր հայերին, — նորից հարցրեց Շուշիկը վիրաւորւելով:

— Դու յիմար ես, — կրկնեց եղբայրը, — թուրքերը չար են, նրանք չեն սիրում հայերին:

— Ձէ, մեր տանտէրն էլ թուրք է, բայց նա լաւն է. ես նրան սիրում եմ. նա մեզ չի սպանի: Այնպէս չէ՞, մայրիկ, — ասաւ Շուշիկը լացակուժած ձայնով:

Բայց մայրը բան չասաւ:

Անցաւ դարձեալ մի քանի ժամ: Գիշերւայ աղջամուղջը վրա էր հասնում: Աննայի անհանգստութիւնը քանի գնում սաստկանում էր: Նա մի քանի անգամ գնացել էր տանտիրոջ ու իր հարևանների մօտ տեղեկութիւններ հաւաքելու կոտորածի մասին: Ասում էին, որ շարքը բռնկել է հենց այն թաղում, ուր իրանց խանութն է, և որ վտանգը մօտենում է իրանց: Ոչ ոք չէր կարող նրան հաստատ տեղեկութիւն տալ իր բանց: Այս օր չէր կարող նրան հաստատ տեղեկութիւն տալ իր ամուսնու՝ Բագրատ Պետրոսեանի մասին: Խեղճ կինը չըգիտէր ի՞նչ անի: Ուզում էր ինքը գնալ Բագրատին փնտրելու, բայց մտածում էր՝ ո՞ւր գնայ, ինչպէս գտնի. իսկ երեխաները... միթէ կարելի էր նրանց մեռակ թողնել վտանգի մէջ: Այս անգոր կացութիւնը, այս անշարժ անկարողութիւնը որևէ բան ձեռնարկելու՝ անտանելի էր:

Մութը կոխել էր: Աննան ճրագը վառեց, պատուհանների փեղկերը վարագուրելով, որ լոյսը դրսից չերևայ: Երեխաները քնել էին: Բայց մօր քունը չէր տանում: Նա շարունակ ահանջ էր դնում դրսի ձայներին: Հրացանաձգութիւնը պակասել էր. հատ հատ չոր ու կարճ տրաքոցների ձայներ էին հասնում: Մէկ էլ շների սուսեցնող ոռնոցն էր լսւում. կարծես քաղաքի բոլոր շները խօսքը մէկ էին արել՝ օրւայ անցած. դարձածի վրա այդ գիշերը սգալու:

Երբեմն դուրսը կատարեալ լուութիւն էր տիրում: Այդ ժամանակ սենեակի ժամացոյցի միօրինակ չըխկչըխկոցն էր լսւում, զարմանալի պարզ ու որոշ. իսկ անկիւնում, յատակի տակից, լսելի էր դառնում մկան բերոցը: Այդպիսի բոպէններին Աննան ուշքի էր գալիս, կարծես արթնանում էր մի երազից, և անքօղ, մերկ իրականութիւնը կանգնում էր նրա առջև՝ այնպէս որոշ, այնպէս բացայայտ, որ նա սոսկում էր:

Սենեակի լուութիւնն ու մենակութիւնը ճնշում էին Աննային: Յերեկը, մասամբ երեխաների պատճառով, նա կարողանում էր զսպել իրան: Այժմ երբ նրանք քնել էին և նամացել էր մենակ, նրան սկսում էր տիրել ծայրահեղ սոսկում: Նա մօտեցաւ քնած երեխաներին. նրանք հանդարտ շունչ էին քաշում: Երկար կանգնեց նրանց մօտ, և ինքն էլ չընկատեց՝ ինչպէս արտասուքներ հոսեցին աչքերից... Փորձեց աղօթել, բայց զուր. աղօթքի խօսքերը նոյնքան խորթ էին թւում իրան, որքան որ ժամացոյցի չըխկչըխկոցն ու մուկի բերոցը: Փոխանակ աղօթքի, այլ մտքեր ու այլ տեսարաններ էին յամառօրէն գալիս, կանգնում նրա դիմաց. նա տեսնում էր արիւն, լսում էր շների ոռնոց, աղաղակներ... Մէկ էլ նորից միտն էր գալիս Բագրատը, ու նա ցնցւում, մնում էր սառած:

Մենակութիւնը դառնում էր անտանելի: Աննան չուզեց երեխաների քունը խանգարել. նա գնաց միւս սենեակ, ուր սեղանի առջև թիկն տւած քնել էր իրանց աղախինը: Խեղճ աղջիկը նոյնպէս շատ էր չարչարւել այդ օրը, անդադար վազ-

վզելով հարևանների մօտ, լուրեր հաւաքելով, յուզւելով: Մշեցի գաղթական աղջիկ էր:

—Տէր, ողորմած Աստօծ,—կրկնում էր նա շարունակ, հրացանաձգութիւնն ու աղաղակները լսելիս.—Գէօ, ահաւասիկ սա էր մեր խայու հալը, մին կոտորւեցանք, մինն ալ կոտորւենք... Ծօ, ալ ընչի՞ էինք գաղթում, հոն կոտորէինք...

Աննան թեթև շարժեց նրա ուսը ու կանչեց.

—Վարդենիկ, Վարդենիկ...

—Ըր...—սկսեց անքալ աղջիկը...—ըր... եաման, ողորմեցէք... միք սպանի... ըր...

Աննան փշաքաղւեց այդ յուսահատ ճշից: Նա աւելի ուժով շարժեց աղջկայ թևն ու աւելի բարձր ասաւ.

—Վարդենիկ, Վարդենիկ:

Աղջիկը վեր թռաւ աչքերը ճմռելով ու վերջապէս հարցրեց շունչ կտրած.

—Եկան... թուրքերը...

—Ձէ, Վարդենիկ, չէ, հանգիստ կաց. ես եմ: Դուան բանալին...

—Քեզի չըտւի...—ասաւ Վարդենիկը

—Ա, ճիշտ, բոլորովին մոռացել էի,—բացականչեց Աննան, զգալով որ շիկնում է. ուղեց խօսքը ուրիշ բանի վրա դարձնել ու հարցրեց.—Ձօրքեր չեկան...

—Ձրգիտեմ... Աս ատեն մարդիկ քնած կըլլան... Պարոնը չեկան...

—Ձէ...

Աղջիկը մտածկոտ գլուխը շարժեց:

Փողոցում մարդկանց ձայներ ու շտապ քայլեր լսեցին: Փողոցում մարդկանց ձայներ ու շտապ քայլեր լսեցին:

Փողոցում մարդկանց ձայներ ու շտապ քայլեր լսեցին: Փողոցում խաւար էր. լապտատարով մօտեցան լուսամուտին: Փողոցում խաւար էր. լապտատարով մօտեցան լուսամուտին:

Փայլերը շուտով հեռացան... Գայլերը շուտով հեռացան...

—Մայրիկ, մայրիկ—յանկարծ լսեց միւս սենեակից:

Աննան ցնցւեց ու շտապեց այնտեղ: Շուշիկը սարսափահար նստել էր իր տեղում ու գրեթէ հեկեկալով ասում էր.

—Մայրիկ, մայրիկ, թուրքերը ինձ գողացել էին և ուզում էին մորթել...

—Սուս, սուս, —սաստում էր մայրը, —դու կըզարթեցնես Սուրէնին:

—Հայրիկը որտե՞ղ է. ինչո՞ւ չի գալիս. արդէն գիշեր է, մութ է, —հարցնում էր դողդողալով աղջիկը:

—Քնիր, քնիր. նա կըգայ. նա մեր ծանօթների մօտ կըլինի...

—Մայրիկ, պառկիր իմ կողքին. ես վախենում եմ, —ասաւ Շուշիկը...

Մայրը պառկեց: Աղջկայ սիրտը արագ բաբախում էր: Բայց հետզհետէ նա հանգստացաւ ու նորից քնեց:

Մենակ Աննան անքուն էր: Նա ցնցւում էր դրսի ամեն մի ձայնից:

Մերթ-մերթ նա վեր էր կենում, ուղղում էր երեխաների վերմակները ու գգւում նրանց, երբ սկսում էին անհանգիստ շուռ ու մուռ գալ քնի մէջ:

Մինչև այժմ Աննայի մտքով մի բնական անգամ չէր անցնում, որ Բագրատը կարող է սպանւած լինել. այս ենթադրութիւնը չափազանց խորթ, չափազանց տարօրինակ էր թըւում նրան: Թէև նա մէկ-մէկ երևակայում էր փողոցների մէջ, խանութների առջև ընկած դիակները, բայց որ դրանց մէջ կարող էր Բագրատը լինել, առաւօտը տանից կենդանի դուրս գնացած Բագրատը... ոչ, ոչ, այդ անհնարին բան էր: Նա իր ամբողջ էութեամբ, հոգու ամբողջ զօրութեամբ փարել էր յոյսին, որ Բագրատը ողջ է, որ նա կըվերադառնայ, որ նա չէ կարող սպանւած լինել: Ուրիշները՝ գուցէ, բայց նա երբէք...

Սակայն այժմ յուսահատութիւն էր լիջել նրա վրա. նա այլ ևս չէր կարողանում իրան զսպել: Նրա գլուխը այրւում էր, մտքերը խառնւում էին: Պատկերներ՝ մէկը միւսից զար-

հուրելի, մէկը միւսից զարգանդ, անցնում էին նրա աչքերի առջև: Նա տեսնում էր Բագրատին արիւնաքամ, փողոցում փուած, լսում էր նրա օգնութիւն աղերսող ձայնը... կամ տեսնում էր նրան այրւելիս իր խանութի բոցերի մէջ...

Գիշերը երկար էր, անհունապէս երկար: Աննան սպասում էր լուսաբացի, երբ պիտի պարզէր ամեն ինչ և վերջանար իր մղձաւանջը:

Բագրատ Պետրոսեանը վաղ առաւօտեան ըստ սովորականի գնացել էր խանութ: Խանութը գտնւում էր քաղաքի այն թաղում, ուր բնակիչների մեծ մասը մահմեդականներ են: Այդտեղ արդէն սկսել էր կոտորածը:

Խանութին դեռ չընթացած, նա հանդիպեց փախչող մարդկանց. նրան նախազգուշացնում էին, որ էլ առաջ չերթայ, այլ աշխատի ետ դառնալ —կամ շուտով մի տեղ թաղնւել: Սակայն նա ուշք չէր դարձնում, կարծելով որ վտանգը չափազանցնում են, որ ինքը դեռ ժամանակ կունենայ ազատւելու:

Ուզում էր լաւ իմանալ թէ ի՞նչ է պատահել ու իր խանութը այցելել:

Բայց նա չըկարողացաւ հասնել խանութին: Արդէն հետեւեալ փողոցում նա կանգ առաւ: Փախչողների ետևից լսում էին տրաքոցներ, վայրի կանչեր, մի անորոշ, խուլ աղմուկ էր կանգնած օդի մէջ: Հեռւում երևում էին զազազած թուրքեր, որոնք դաշոյններով ու ատրճանակներով դիւնւած վազում էին ամեն կողմ... Տեղ տեղ սպանւածներ էին ընկած: Առաջինը, ամեն կողմ... Տեղ տեղ սպանւածներ էին ընկած էր սալաորին հանդիպեց Բագրատը, մի ջրկիր էր. ընկած էր սալաորի յատակի վրա. գլխի արիւնը սկսել էր արդէն չորանալ: Միքիչ հեռու ընկած էր, լեզուն դուրս ցցած, նրա ձին շուռ տւած տակառով, որից թափւել էր ջուրը:

Բագրատը հասկացաւ վտանգի մեծութիւնը: Նրան յանկարծ զարհուրանք պատեց: Նա էլ սկսեց վազել: Մի գնդակ

սլացաւ նրա մօտից ու աղմուկով ծեփւեց դիմացի խանութի ցուցանակին: Տուն վերադառնալու մասին էլ ուշ էր մտածել. պէտք է շուտով մի տեղ պատսպարուէր: Դարպասները, պատուհանները ամեն տեղ պինդ փակւած էին: Ճարահատ նա կանգնեց մի դռան առջև ու իր բռունցքները ամբողջ ծանրութեամբ սկսեց բաղխել:

— Փրկեցէք, ներս թողէք, քրիստոնեայ հայ եմ, — աղաղակում էր նա:

Համոզելով որ նա հայ է, դուռը բաց արին, նրան ներս թողին ու խկոյն նորից կողպեցին:

Ներս մտնելով Բագրատը խոր ախ քաշեց. նրան աթոռ տւին. նա գունատ էր ու դողում էր. մի անծանօթ շուր բերեց նրա համար:

Այդ տունը, ուր նրան ապաստան էին տւել, Սերովբեանի տունն էր. Բագրատի նման ուրիշ շատերն էլ հաւաքւել էին այնտեղ: Տղամարդիկ խորհրդակցում էին՝ ինչ անեն. մի քանիսը անհանգիստ դէս ու դէն էին վազում: Կանայք նստոտել էին անկիւններում արտասուլից աչքերով: Երեխաներ էլ կային... Բագրատին առաջարկեցին ելնել կտուրը: Նա հաճաճայնեց, մանաւանդ որ իր խանութի վիճակը նրան շատ էր հետաքրքրում:

Կտուրից նա տեսաւ, որ ամբողջ այն շարքը, ուր նրա խանութն էր գտնուում, անփնաս է: Այդ նրան ուրախացրեց: Խանութից ոչ հեռու ընկած էր մի դիակ. Բագրատը սկզբում չըճանաչեց նրան: Բայց երբ նրան մի հեռագիտակ տւին ու նա նայեց, նա իմացաւ դա թէ ով է. իր գործակատար Յակոբն էր:

Բագրատի սիրտը ճմլւեց ցաւից: Նա մի բոպէ մնաց ապշած, ընկճւած: Յանկարծ մի մոլի գայրոյթ բռնկեց նրա մէջ:

Նա կարծես հիմա միայն ճշմարիտ որ հասկացաւ այդ կոտորածի, այդ մարդկանց արարքի խորին վարշութիւնը, այդ սպանութիւնների ու թալանի սոսկալի անիրաւութիւնը. այդ նա զգաց յանկարծ պարզ և ուժգնօրէն և ըմբոստացաւ: Ու

բարի վաճառականը կատաղեց: Նրա աչքերը մթնեցին, երեսը ալյալւեց. նա սկսեց մռնչալ փայրի ցուլի նման, ոտները գետնին գարնել, բռունցքները սեղմել... Նա նզովում էր, անիծում էր իր անկարող ցասումի մէջ:

Ո՞ւմ դէմ էր նա ըմբոստանում, ինքն էլ չէր կարողանում ասել: Միթէ այդ խեղճ, խաւար մարդկանց դէմ, որոնք կոտորում էին այսօր իրանց եղբայրներին... Նրան կատաղեցնում էր հենց ինքն այդ կոտորածը, այդ ջարդը իր անմտութեամբ, ներքին տգեղութեամբ ու անօրէնութեամբ: Նա զրգւում էր ամբողջ աշխարհից:

Նրա հետ կտուրին եղածները շրջապատեցին նրան, սկսեցին հանգստացնել, ջուր բերին... Երբ նրան կտուրից ներքև էին իջեցնում, նա հեկեկում էր ու շղայնօրէն ծիծաղում: Շատերի աչքերին արցունք էր կանգնած...

Գործակատարը՝ Յակոբը, որ ընկած էր այժմ փողոցում, Բագրատի պէս շուշեցի էր: Նա թողել էր իր հայրենիքն ու եկել Բագու տասնութեց տարեկան հասակում: Հազին ունէր արխալուղ, անտաշ էր, մուշտարիների հետ վարւելու ձևը չէր իմանում: Կարճ ժամանակւայ մէջ սակայն նա կարողացել էր գործին ծանօթանալ և ընտելանալ նոր պայմաններին:

Իր ազնութեամբ, շիտակութեամբ, եռանդով, Յակոբը շուտով զբաւել էր Բագրատի սէրը: Նրան նայելիս Բագրատը միշտ իր անցած օրերն էր յիշում. ինքն էլ մի ժամանակ, Յակոբի նման երիտասարդ, թողել էր հայրենի օջախը՝ իր աշխակոբի նման երիտասարդ, թողել էր համար ճամփա բանալու համար. տանքով, բնական ձիրքով իր համար ճամփա բանալու համար: Նա ինքն էլ նրա նման շատ չարքաշ, գժւար օրեր էր տեսել: Նա հասկանում էր Յակոբի վիճակն ու աշխատում էր հովանաւորել, աշակցել նրան:

Յակոբը մի ծեր մայր ունէր Շուշի, մի քոյր ու մի կոյր եղբայր. բոլորին էլ ինքն էր պահում: Խնայողութիւն էր անող, ուզեցնալով մի քիչ փող հաւաքել ու անկախ առևտուր նում, ուզեցնալով մի քիչ փող հաւաքել ու անկախ առևտուր սկսել Շուշի: Այժմ նա իրան արդէն հասած էր համարում իր նպատակին. մի քանի ամսից յետոյ պիտի երթար հայրենիք...

Ծեր մայրը անհամբեր սպասում էր նրան: Ուխտերի դռներն էր ընկնում, խոստումներ էր անում: Մի հարսնացու էլ էր աչքը դրել որդու համար:... Եւ ահա այդ պայծառ յոյսերն ու այդ շիւտանի կեանքը, այդ ամենը վերջացան, անհետացան... Ժամանակը անցնում էր: Ոչ մի տեղից օգնութիւն չըկար: Թէև երբեմն շրջիկ կողակներ էին երևում, բայց թուրքերը չէին քաշուում նրանցից ու շարունակում էին իրանց գործը:

Իրիկնադէմ թուրքերը՝ նկատելով կառուրի վրա տղամարդկանց, սկսեցին հրացաններ պարպել ու կոտորատել տան դռներն ու դարպասները: Տան մէջ սաստիկ իրարանցում սկսեց. կանայք ուշաթափուում էին, երեխաները բղաւում: Տղամարդիկ վճռեցին պաշտպանել. մի քանի ատրճանակ ունէին միայն: Բարեբախտաբար այդ ժամանակ փողոցում երևաց զինւորների մի վաշտ: Ամբոխը նահանջեց և մի առ ժամանակ հանգիստ թողեց նրանց:

Կառուրի վրա եղածները սկսեցին օգնութեան կանչել զինւորներին, թաշկինակներով նրանց նշաններ անելով: Սակայն վաշտը կանգ չառաւ և շուտով անյայտացաւ հեռաւոր փողոցներում...

Ամբոխի ուշադրութիւնը գրաւել էր այժմ մի այլ տուն: Գիշերը կոտորածը մի քիչ հանգարուեց, թալանիչները իրանք էլ յոգնել էին օրւայ աշխատանքից: Չընայած այդ բացի մանուկներից: Բոլորը հաւաքւել էին միասին ու նստոտել էին պատերի տակ՝ դռներն ամուր փակած ու պատուհանները վարագուրած: Յատակի վրա դրած ճրագների աղօտ լոյսը երկար սոււերներ էր տալիս, որոնք տարօրինակ ցնորական ձևերով ձգւում էին պատասանների ու առաստաղի վրայով: Այդ կիսախաւարի մէջ մարդկանց կերպարանքները երկարացել էին ու անճանաչելի դարձել: Երբեմն որևէ անկիւնից կնոջ կամ երեխայի լաց էր բարձրանում. այդ ժամանակ ամենքը դժգոհ սկսում էին հանգստացնել ու սուս անել նրան: Աշ-

խատում էին բարձր չըխօսել: Դրսի ամեն մի ձայն վախեցնում էր նրանց:

Բագրատը անքուն էր: Ընտանիքի վիճակը սաստիկ անհանգստացնում էր նրան. նա գիտէր որ կոտորածը տարածւում է դէպի այն կողմը, բացի այդ՝ նա գիտէր թէ ինչ տանջանքներ պիտի կրէին կիսն ու իր երեխաները իրան սպասելով: Վերջապէս՝ երկար, դաժան գիշերից յետոյ օրը սկսեց բացւել:

Առաւօտեան Բագրատը մի քանի ուրիշ պարոնների հետ նորից ելաւ կառուրը: Նրա տեսածը ուրախ բան չէր. թալանում էին նրա հարևան խանութները: Շուտով հերթը նրա խանութին էր հասնելու. Բագրատը շունչը կտրած սպասում էր. բայց երբ վերջապէս մօտեցան՝ նա հանգստացաւ. կողպէքները ճարպիկ կերպով կոտրեցին, բաց արին խանութը ու ըսկսեցին կողոպտել: Ապրանքը դուրս էին տանում համբալները՝ մէջքերին շալկած կամ բարձում էին սայլերի վրա ու արագ տանում: Մի ինչ որ կնիկ կռան տակին հովանոցներ ժողոված, իսկ փեշի մէջ մի քանի ջուխտ կօշիկներ ու այլ իրեր լցրած՝ շտապով տուն էր տանում...

Բագրատին սկսեցին մխիթարել. նա նայում էր մխիթարողների աչքերին առանց հասկանալու՝ ինչ էին նրանք ասում. ու առանց պատասխանելու. նրան տիրել էր խորին անտարբերութիւն ու թմրութիւն. այսուհետև ինչ ուզում է լինի: Մի միտք միայն պարզ մեխւել էր իր գլխում, որ իր այսքան տարւայ աշխատանքը փուճ էր, որ այժմ բոլորովին աղքատացած է: Ու մի բան էր այժմ ցանկանում միայն՝ տեսնել իր ընտանիքը:...

— Տէր Աստուած, միթէ նրանցից էլ կը զրկես ինձ. միթէ ես այլ ևս չեմ տեսնելու նրանց:

Մինչ այդ նոր վտանգ էր սպառնում Սերովբեանի տանը: Խուժանը հրդեհել էր հարևան տներից մէկը, ու կրակը կարող էր անցնել նրանց վրա: Ամբոխը կատաղել էր, որովհետև այդ-

տան տէրը կտուրից սկսել էր կրակել ու սպանել էր թուրքերից շատերին: Կրակը կարող էր այն տնից դէսը անցնել:

Բագրատը վճռեց՝ ինչ որ էլ լինի դուրս գայ այդտեղից ու գնայ տուն: Երբ կողակների մի խումբ երևաց փողոցում, նա շտապով վազեց ցած, բաց արաւ դռները ու սկսեց կանչել, որ նրանք ճամփա գցեն իրան մինչև իր տունը: Կողակները սկզբում չէին համաձայնում և ուզում էին հեռանալ, բայց երբ Բագրատը խոստացաւ փող տալ նրանց, նրանք յանձն առան, պահանջելով 150 ուրբի: Բագրատի դէմքին մի փոքրիկ դժգոհութիւն նկատելով՝ նրանք ստացին:

— Ի՞նչ է, շատ է, մենք հօ չենք խնդրում, ինչպէս կուզես. ուրիշներից աւելի ենք ստացել, — և ուզում էին հեռանալ:

— Զէ, չէ, տարէք, կը վճարեմ, — բացականչեց Բագրատը, մէկի թևից բռնելով:

Նա մօտ 100 ուրբի կանխիկ փող ունէր, այդ փողը նա շտապեց տալ կողակին, խոստանալով որ մնացածը տանը կը վճարի: Այսպիսով Բագրատը երկու կողակների ուղեկցութեամբ սաստիկ բաբախող սրտով դիմեց դէպի տուն:

Նրա օրինակին հետևեցին ուրիշները, որովհետև դեռ ազատ կողակներ կային մնացած:

ԳՂՈՒՆ Գ.

Մայր ու որդի

Կարելեանները արդէն երեք ամիս էր՝ ինչ Բագու էին: Նրանք դտել էին մի լաւ բնակարան և յարմար սարքել: Միհրանին առայժմ դպրոց չէին ուղարկում. մտադիր էին տանը սովորեցնել, թէև դեռ հաստատ որոշած չէին: Գերասիմի գործերը լաւ էին. նա մի քանի անգամ գնացել էր Բալասանի, Սաբունչի և այլ տեղերը, նաւթային հողաբաժինները տեսնելու ու հանքերը քննելու համար, և արդէն պատրաստում էր գործ սկսել, երբ պայթեց այդ կոտորածը:

Ջարդի առաջին օրը նրանց փողոցը հանգիստ էր: Բայց երկրօրդ օրը առաւօտեան նրանց տան մօտ թուրքերի մի խումբ յայտնուեց ու սկսեց անխնայ ջարդել ու կոտորել: Կարելեանների մօտ սաստիկ իրարանցում ընկաւ: Գերասիմը հաւաքեց կարևոր թղթերը, վերցրեց փողերն ու գինեկց մի հատրճանակով: Մարիամը հանեց իր գոհարներն ու այլ թանկագին պաճուճանքները և կարեց իր շրջագեստի մէջ: Միհրանը լալիս էր ու ամենից շատ անհանգստութիւն պատճառում իր ծնողներին: Խէչօն դառել էր լուրջ ու մտազբաղ: Նա դիտողի դեր էր կատարում ու հաղորդում էր թուրքերի գործողութիւնների մասին:

Միհրանի մօտով անցնելիս նա աշխատում էր տղային քաջալերել:

— Տեսէք, տեսէք, մեր կտրիճը արցունք է կտրել, — հանաք էր անում նա: Իսկ երբ Միհրանը դժգոհ երեսը դարձնում էր չըծիծաղելու համար, Խէչօն աւելացնում էր.

— Տղամարդը լաց չի լինի. պէտք է քաջ լինես, իսկական

կարիճի պէս քաջ: Խէչօն չոգուդ մեռնի. մի տեսնեմ, որ թուրքն է քեզ ձեռք տալիս:—

Այն ինչ՝ խուժանը հրդեհել էր հարևան տունը: Բոցը արագ անցնում էր իրենց տան վրա: Բնակիչները թողնում էին իրենց բնակարանները ու իջնում էին բակ: Պէտք էր մի բան վճռել: Մի պարոն առաջարկեց սանդուխտ բերել, անցնել պատի վրայով դիմացի բակը, որտեղից կարելի էր դուրս գալ մի այլ փողոց, որ դէպի հայկական, անվտանգ թաղն էր տանում: Սանդուխտ բերին ու սկսեցին անց կենալ պատի վրայով: Կանանց ու երեխաներին գրեթէ շալակած անց էին կացնում: Կարելեանները առաջինների թւումն էին...

Բայց Յիբօն չըկար. Միհրանը երկար կանչեց նրան, վախենալով որ թուրքերը նրան կը սպանեն, բայց շունը չեբևաց. ժամանակ չըկար շատ սպասելու. Միհրանին զօռով շալակեց Խէչօն ու անց կացրեց պատի վրայով. Մարիամին էլ օգնեց Գերասիմը:

Սակայն երբ նրանք դուրս եկան փողոց, մի սխալ գործեցին: Քաղաքը լաւ չըճանաչելուց էր թէ սաստիկ շփոթութիւնից, նրանք փոխանակ հայկական թաղի կողմը գնալու, ուղղւեցին հակառակ կողմը, դէպի թուրքերը: Նրանք շուտով նկատեցին իրանց սխալը ու սկսեցին ետ փախչել: Խէչօն բարձրացրել էր Միհրանին իր թևերի վրա ու իր ոտների ամբողջ զօրութեամբ վազում էր. նա արդէն շատ առաջացել էր Մարիամից ու Գերասիմից: Մարիամն ու Գերասիմը նոյնպէս որքան ուժ ունէին փախչում էին նրանց ետևից: Բայց արդէն ուշ էր. թուրքերի մի խումբ նկատել էր նրանց ու ընկել էր նրանց ետևից՝ վայրենի ձայներ արձակելով ու նրանց վրա կրակելով: Գերասիմը սկսեց նրանց պատասխանել իր ատրճանակից, ազատ ձեռքով Մարիամին գրկած ու նրան արագ իր հետ տանելով. Մարիամը մօտ էր ուշաթափութեան ու չէր կարողանում լաւ վազել...

Չրացանաձգութիւնը մօտենում էր, գնդակները արդէն այս ու այն կողմից վզոտում էին:

Յանկարծ Գերասիմը կանգ առաւ, կուրծքը բռնեց, մի քիչ տարուբերեց և ամբողջ մարմնով գետին տապալեց: Գնդակը դիպել էր կռնակին, կուրծքը ծակել անցել. մի ակնթարթում նա շունչը փչեց: Լսեց դժբախտ կնկայ յուսահատ և աղեկտուր կոծն ու աղաղակը: Մարիամը ընկաւ ամուսնու դիակի վրա, անգիտակցօրէն բարձրացնում էր նրա գլուխը, գրրկում էր նրա պարանոցը, համբուրում էր, մագերն էր փետում և ձեռներն էր կոտրտում: Մօտ վազեց մի թուրք և կրկին ու կրկին դատարկեց ատրճանակը Գերասիմի վրա: Մարիամը դզգզած մագերով վեր ցատկեց և խելագարի պէս ոչ-մարդկային ձայնով ձչաց.

— Արիւնախո՛ւմ, դագան, ի՛նչ էր արել սա ձեզ, ինչո՞ւ սպանեցիք սրան: Ձեզ անմեղ արիւն է հարկաւոր... Ահա ձեզ... սպանեցէք և ինձ: Բարբարոսներ, անգութներ...

Կնոջ խօսքերին երկար ականջ դնող չը կար. մի քանի արաքոցներ լսեցին, և նա ընկաւ իր ամուսնու կողքին, արիւնլալ:

Միհրանը Խէչօյի ձեռքին անդադար դէս ու դէն էր ընկնում, լալիս էր, ձչում:


— Կանգնիր, Խէչօ, կանգնիր... Տես, տես, — մայրիկին ու հայրիկին սպանում են.

Բայց Խէչօն այդ լսելով՝ աւելի ու աւելի արագ էր առաջ սլանում: Գիտէր որ ոչ մի կերպ չի օգնելու նրանց, իսկ ամեն յապաղում կարող էր վտանգի մէջ ձգել իր սիրելուն: Նա վազում էր առանց ետ նայելու, Միհրանին ամուր գրկած, որ աղան դուրս չը պրծնէր և աշխատում էր իր մարմնով ծածկել նրան գնդակներից, որովհետև այդ միջոցին իրենց ետևից էլ ս'լսել էին արձակել: Գնդակը դիպաւ Խէչօյի ձախ թևին, բայց նա Միհրանին աջով խտտած՝ շարունակում էր արագ վազել:

Մի ուրիշ գնդակ դիպաւ նրա մէջքին, բայց նա տակաւին վազում էր...

Բագրատը երկու կողակների պահպանութեան տակ գնում էր տուն: Յանկարծ կողքի մի փողոցից աղաղակներ ու տրաքոցներ լսեցին: Մի մարդ դուրս վազեց այնտեղից. նրա մէջքից արիւն էր հոսում. նա գունատ էր և հազիւ էր վազում, մի սղայ ամուր գրկած:

Տեսնելով Բագրատին կողակների հետ, այդ մարդը վերջին ճիգն արաւ և ուղղւեց դէպի նա: Բագրատին մի քանի



քայլ չընսած, նա ուժասպառ փուկեց գեանին: Տղան շփոթւած փաթաթեւել էր մարդու վզին, խելագարի պէս համբուրում էր նրան ու ճշում: Բագրատը շտապեց մօտենալ:

Մեռնող մարդը իր աչքերը բաց արաւ, նայեց Բագրատին ու կողակներին ու թոյլ ընդհատուող ձայնով ասաւ.

— Բրիտանացիներ, փրկեցէք այս մանուկին... այնտեղ նոր սպանեցին սրա ծնողներին... և մեռնում եմ...

Նրա շունչը կտրւեց... Իր դողդոջուն ձեռքը Բագրատին պարզելով, նա կարողացաւ միայն ասել.

— Հայր եղէք...

Ու դնելով մայթի վրա իր գլուխը, նա շունչը փչեց, բաց աչքերը երկնքին յառած, ժպիտը շրթունքներին:

— Խէչօ, Խէչօ, — աղաղակեց տղան սոսկալի ձայնով, խելքը կորցրած ընկաւ նրա վրա ու սկսեց ցնցւելով համբուրել նրա դէմքը:

Բագրատը հազիւ կարողացաւ գսպել իր արցունքները: Նա գօռով վեր քաշեց սղային ու սկսեց զգւել նրան: Բայց տղան ընդդիմադրում էր, ցնցւում էր ու անդադար կանչում.

— Խէչօ, Խէչօ...

— Դէհ շուտ արա, — ասացին վերջապէս հեռւում կանգնած կողակները, համբերութիւնը կորցնելով:

Միհրանը (մեր ծանօթ տղան էր այդ) նայեց նրանց ու յանկարծ ձայնը կտրեց:

Բագրատը շտապեց նրան բարձրացնել, շտապով շուռ եկաւ այդ տեղից ու սկսեց քայլել: Կողակները նրան կանգնացրին, պահանջելով, որ 25 ուրբլի ևս աւելացնի տղայի համար: Բագրատը գունատւեց... Խեղդւած ձայնով նա խոստացաւ այդ 25 ուրբլին էլ տալ:

Անքուն գիշերից յետոյ, յաջորդ օրը, Աննան ամեն յոյս կորցրել էր ամուսնուն կենդանի տեսնելու: Իսկ երեխաների անհանգստութիւնն ու նրանց անդադար հարց ու փորձերը նրան խելքից հանում էին: Թէև նա գիշերը վճուել էր ինքը նրայ Բագրատին փնտուելու, բայց այժմ նրան այդ բանը կազնայ Բագրատին փնտուելու, որ 25 ուրբլի ևս աւելացնի տղայի համար... միևնոյն է չը տարելապէս անմիտ բան էր թւում: Ո՞ւր գնար... միևնոյն է չը պիտի գտնէր... Իսկ երեխաները...

Կէսօրից յետոյ փողոցում աղմուկ լսեց. մի գնդակ ծակեց փեղկը ու թաղւեց պատի մէջ: Երեխաները մտան թախտի տակ. Վարդենիկը կուչ էր եկել վառարանի ետև. Աննան

իրանը ձգած, բռունցքները սեղմած կանգնել էր դռան առջև:

Դարպասը սկսեցին ամուր ծեծել. յետոյ թիւրքերէն բարձր խօսել: Միքիչ յետոյ խուժանը հեռացաւ: Մի քանի րոպէ անց վազէվազ եկաւ տանտէրը Աննային հանգստացնելու: Ամբոխը ուզում էր ներս խուժել հայերին կոտորելու համար, բայց թուրք տանտէրը կարել էր նրանց առաջ. նա դեռ համոզում էր նրանց, բայց երբ տեսաւ, որ չեն համոզւում, բղաւեց, որ նախքան նրա տուն մտնելը, նրանք պէտք է իրան սպանեն ու անցնեն վրայով: Այդ կտրուկ խօսքերը սաստեցին նրանց. նրանք հեռացան ծաղրելով ու հայհոյելով:

Աննան արցունքները աչքերին բռնեց տանտիրոջ ձեռքը ու սեղմեց իր շրթունքներին. տանտէրը բան չասաւ և դուրս գնաց ունքերը կիտած ու գլուխը շարժելով:

Մի ժամ ևս անցաւ: Աննան ընկճած էր: Գլխի ցաւը, որ սկսել էր առաւօտեան, այժմ սաստկացել էր. նա հազիւ էր կարողանում ոտքի վրա կանգնած մնալ: Նրան կատարեալ յուսահատութիւն ու թուլութիւն էր տիրել:

Դրաի դռանը մի ուժեղ զանգակ լսեց. տանը նոր իրարանցում եղաւ. ո՞վ էր այդ՝ թուրքերը, թէ՞ գուցէ... Բագրատը: Վարդենիկը համարձակեց գնալ դռան մօտ, տեսնելու՝ դա ո՞վ է. Աննան լարւած սպասում էր: Դռան ետևից լսեց Բագրատի ձայնը:

— Պարոնը, պարոնը, — կանչեց Վարդենիկը, դուռը բացարձակ:

Պէտք էր տեսնել ամենքի ուրախութիւնը, երբ նրանք գրկում էին Բագրատին ու լաց էին լինում բերկրութիւնից: Երեխաներն ու Աննան իրանց հարցերով խլացնում էին Բագրատին:

— Իսկոյն, իսկոյն, ամենը հերթով կը պատմեմ, — ասաւ նա, Միհրանին ներս տանելով և թախտի վրա նստեցնելով, ու գնաց կողակներին մնացած 75 ոտբլին վճարելու:

Երեխաները զարմանքով նայում էին Միհրանին ու ծա-

ծուկ փսփսում էին: Իսկ Միհրանը նստել էր դալկացած, ապակի աչքերով, հայեացքը անշարժ մի կէտին յառած: Նա զգում էր, որ մի սարսափելի բան է պատահել, բայց դեռ չէր կարողանում ըմբռնել օրւայ անցած դարձածը: Նա իրան առանց այն էլ օտար էր զգում այստեղ, իսկ Պետրոսեանների ուրախութիւնն աւելի էր սաստկացնում այդ օտարութեան ու խորթութեան զգացմունքը:

Բագրատն ու Աննան ներս մտան: Ամուսինը պատմել էր արդէն Աննային Միհրանի պատմութիւնը: Այժմ նա մօտեցաւ երեխաներին ու ասաւ.

— Սուրիկ, Շուշիկ, ահա ես բերել եմ ձեզ մօտ մի որբացած տղայ. դուք պէտք է նրան սիրէք ձեր եղբօր պէս. իմ փափագն է այդ: Այժմ դուք մի նոր եղբայր ունէք, իսկ ես ու մայրիկը՝ մի նոր զաւակ: — Ու նրանց մօտեցնելով Միհրանին, նա աւելացրեց. — Իսկ ի նշան ձեր սիրոյ, դուք պիտի համբուրէք սրան:

Երեխաները քաշւելով համբուրեցին տղային: Միհրանը ծածկել էր երեսը, կծկւել էր թախտի վրա ու սկսել էր լալ: Շրջապատողները իրանց մեղաւոր զգացին իրանց ցոյց տւած մեծ ու ազմկոտ ուրախութեան համար: Աննան սկսեց փայփայել նրան:

— Ո՛ւր են հայրիկը, մայրիկը, Խէչօն... տարէք ինձ նրանց մօտ... նրանք մեռած չեն... — ասում էր Միհրանը:

Բագրատը ուզեց նրան մխիթարել, բայց այդ բանից Միհրանը աւելի վատ եղաւ և սկսեց անզուսպ հեկեկալ:

Վարդենիկը վազէվազ ներս եկաւ ասելու, որ փողոցի դռան մօտ մէկը կայ: Սկսեցին ականջ դնել: Դրսից՝ դռան տակին լսում էր մի անորոշ աղմուկ, թխկթխկոց, չանկրտոց, վեզստոց ու մերթ՝ շան հաչոց: Ոչ ոք չէր հասկանում՝ դա ի՞նչ է:

Յանկարծ Միհրանի դէմքը փոխւեց, նա վեր թռաւ և ուրախ բացականչեց.

—Իմ Յիբօն է, Յիբօն: Ներս թողէք թէ չէ նրան էլ կը սպանեն:

Նա ուզեց վազել դէպի դուռը, բայց ամեն կողմից նրան բռնեցին և վախեցած նայում էին նրան՝ չը հասկանալով թէ բանն ինչու՞ն է: Տղան փորձում էր նրանց ձեռքերից դուրս պրծնել և աղաղակում էր.

—Ներս թողէք նրան, դա իմ շունն է: Ներս թողէք նրան, աղաչում եմ, թէ չէ նրան էլ կը սպանեն:

Բազրատը իջաւ ու բաց արաւ դուռը: Շունը ներս ցատկեց, հաչելով ընկաւ Միհրանի վրա ու սկսեց լիզել նրա երեսը, ձեռները... Միհրանը համբուրում էր նրան ու լալիս: Յետոյ Յիբօն սկսեց պտաւել սենեակում ու հոտոտել ամեն մէկին:



Յիբօյի գալը Միհրանին սաստիկ ուրախացրեց ու մխիթարեց: Նա իրան այլևս այնքան մենակ ու օտար չէր

զգում այստեղ: Այժմ իր բոլոր հին մտերիներին ու բարեկամներին միայն Յիբօն էր մնացել նրա հետ: Պետրոսեանները ուրախանում էին շան ու տղայի վրա նայելով:

Բանն այն է, որ Յիբօն Միհրանի կողք լսելով, վազել էր դէպի այն կողմը, բայց կարելեանները արդէն անցած էին պատից: Զրկարողանալով պատի վրայից թռչել, նա երկար դէս ու դէն էր ընկնում, կողկոնձում, աշխատում էր սանդուխտով վեր ելնել, մինչև որ տղամարդկանցից մէկը, գիտեալով որ դա կարելեանների շունն է, բռնել էր նրա վզից ու անց էր կացրել նրան պատի այն կողմը: —Երբ Յիբօն փողոց

դուրս վազեց, արդէն ոչ ոք չէր երևում. շունը ընկաւ նրանց հետքով: Շուտով հանդիպեց նա Գերասիմին ու Մարիամին արեան մէջ իրար կողքի ընկած: Յիբօն հոտոտեց նրանց ու նստելով նրանց մօտ՝ սկսեց ոռնալ: Յետոյ վեր կացաւ ու շարունակեց վազքը, մինչև որ Խէչօյին հասաւ: Նրա վրա էլ սուգ անելով, ք նա՝ չը գտնելով Միհրանին, սկսեց վազել Բազրատի հետ երով, մինչև որ նրանց դռան հասաւ:

Թէև Յիբօյի գալը Միհրանին մի քիչ մխիթարեց, բայց գիշերը նա չը կարողացաւ հանգիստ քնել: Նա շարունակ ձայներ էր լսում, նրան հրդեհներ էին երևում, կողակներ խիստ դէմքեր: Նա տեսնում էր իր ծնողներին սպանւած, յիշում էր արիւնաթաթախ Խէչօյին... Նրա գլուխը այրւում էր տաքութիւնից, ամբողջ մարմինը քրտնած էր: Նա վեր էր թռչում փայլող աչքերով, սկսում էր կանչել մօրը, Խէչօյին, լալիս էր... Աննան ու Բազրատը նրանից չէին հեռանում ու ամբողջ գիշեր խնամք էին տանում, թէև սաստիկ յոգնած էին երկուսն էլ:

Առաւօտեան տղայի դրութիւնն աւելի վատացաւ. տաքութիւնը չէր անցնում, նա ոչ ոքի չէր ձանաչում, գառանցում էր: Աննան ու Բազրատը չը գիտէին՝ ինչ անեն: Բժիշկ բերել առայժմ անհնարին էր: Մտիպւած էին իրանց հասկացածի պէս խնամել երեխային տանը եղած միջոցներով:

Սուրբիկն ու Շուշիկը ձայները կտրել էին: Սուրբիկին մեծ բաւականութիւն էր պատճառում այն, որ Միհրանը պարկել էր իր անկողնում, իսկ Շուշիկը նրան նախանձում էր:

— Գիտես, — փսփսում էր Սուրբէնը, — մայրիկը ասաւ, որ Միհրանը հիւանդ է. նրա հայրիկին ու մայրիկին սպանել են...

— Այո, այո. խեղճ Միհրան, ես նրան շատ եմ սիրում... Իսկ դու լսեցի՞ր, որ նա կանչում էր ինչ որ Խէչօյի. ո՞վ է այդ Խէչօն, — հարցրեց Շուշիկը...

— Գիտես, Շուշիկ, ես այսօր երազում տեսայ, որ մեր հայրիկին ու մայրիկին սպանել են և մենք մնացել ենք մե-

նակ Միրանի հետ, — շնչաց Սուրէնը, աչքերը լայն բաց անելով:

— Դու վատն ես, դու վատն ես, ես չեմ ուզում քեզ հետ խօսել. մայրիկին ու հայրիկին չեն կարող սպանել, — բացականչեց Շուշիկը ու սկսեց լալ:



— Սնու, կամաց, Միրանը հիւանդ է... Ահ, բոլոր ազնիկներդ այդպէս էք. քեզ հետ չի կարելի խօսել: Ես շատ ուրախ եմ, որ Միրանը մեզ մօտ է. նա իմ ընկերը կը լինի...
 — Ձէ, իմը... — ասում էր Շուշիկը...
 Սուրէնը Շուշիկին թէև շատ էր սիրում, բայց իբրև

աւագ ու իբրև տղայ, միշտ աշխատում էր ցոյց տալ իր աւաջնութիւնը: Միրանի հետ նա գրեթէ հասակակից էր:

Այսպէս անցաւ մէկ օր ևս: Միրանի դրութիւնը քանի դնում վատանում էր: Յիրօն նրա մահճակալից չէր հեռանում: Երբեմն նա վեր էր կենում, դնում էր թաթերը անկողնի վրա ու սկսում էր նայել տղային իր խելօք աչքերով ու լիզել նրա ձեռքերը: Սուրէնն ու Շուշիկը շան համար կերակուր էին բերում, բայց Յիրօն ախորժակ չէր ունենում...:

Հրացանաձգութիւնը դադարել էր: Տանաէրն եկաւ ասելու, որ հաշտութիւն է կայացել և որ կարելի է անվախ տնից դուրս գալ: Բազրատը վճռեց գնալ բժիշկ բերելու, չընայած Աննայի անհանգստութեան: Հազիւ հազ կարողացաւ բժշկին համոզել հիւանդին այցի գալու...:

Բժիշկը հիւանդին քննելով և հարց ու փորձ անելով տղայի մասին՝ մի կողմ տարաւ Բազրատին ու յայտնեց, որ տղայի դրութիւնը չափազանց վտանգաւոր է, որ դա արդիւնք է սաստիկ հոգեկան ցնցումի և որ տղան հազիւ թէ կազդուրէի: Նա դեղեր գրեց, մի քանի խորհուրդներ տաւ ու գնաց, խոստանալով միւս օրը նորից գալ:

Պետրոսեանները տխրել էին. նրանք անկեղծ կերպով սկսել էին սիրել այլ տղային, որը այնքան անբախտ էր և որի համար նրանք արդէն բարութիւն էին արած... Բազրատը առայժմ թագցնում էր իր կնոջից իրանց խանութի թատրանէին ու իրանց վիճակած աղքատութիւնը. խեղճ կինը աւանց այն էլ շատ էր տանջել ու մաշել այս վերջին օրերը: Սակայն՝ վաղ թէ ուշ՝ պէտք էր ասել:

Բժշկի գնալուց յետոյ, Բազրատը դուրս եկաւ տնից ու դեղեր պատուիրելով՝ ուղղեց դէպի խանութի կողմը. նա ուզում էր անցնել իր խանութը ու կարգադրել, որ Յակոբի մարմինը վերցնեն, պատուով թաղեն... Սակայն Յակոբի դիակը տարել էին արդէն ուրիշ մարմինների հետ: Իսկ խանութը իսպառ կողոպտւած, մաքրւած էր:

Կարեւեանները հետ պատահածից մի քիչ յետոյ, այն փողոցով, ուր ընկած էին նրանք, անցնում էր մի սպայ մի խումբ զինւորներով: Ընկած ամուսինները գրաւեցին նրա ուշադրութիւնը իրանց լաւ հագուստով. նրանց դէմքերը ցոյց էին տալիս, որ կըթւած ընտանիքից պիտի լինէին: Մօտենալով նրանց, սպան Մարիամի թոյլ հառաչանքը լսեց: Տեսնելով որ նա դեռ կենդանի է, սպան հրամայեց զգուշութեամբ բարձրացնել նրան ու ձեռքերի վրա տանել հիւանդանոց: Վեց հոգի խնամքով բարձրացրին ուշաթափ Մարիամին. սպան անձամբ ճամփա գցեց նրան մինչև հիւանդանոց ու խնդրեց որ նրան յատուկ ուշադրութիւն դարձնեն: Որովհետև ազատ տեղ չըկար, Մարիամին պառկացրին ընդհանուր սրահում միւս վիրաւորների հետ, մի հին անկողնի վրա: Տեղափոխութեան ցնցումներից նրա ցաւերը սաստկացել էին ու նա սկսել էր աւելի տնքալ:

Բժիշկները այնքան գործ ունէին այդ օրը, որ մի քանի ժամ անցաւ, մինչև որ նրանք Մարիամին հասան, քննեցին նրա վէրքերը ու սպեղանի դրին:

Վէրքերը շատ վատնուաւոր էին. մի գնդակ ծակել էր կուրծքը, իսկ միւսը դիպել էր կողքին ու մնացել էր այնտեղ: Գնդակը հանելու գործողութիւնը անմիջապէս կատարել անկարելի էր, որովհետև վիրաւորը շատ արիւն էր կորցրել ու չափազանց թոյլ էր. յետաձգեցին միւս օրւան:

Հետևեալ օրը Մարիամի տաքութիւնը սաստկացաւ, զարկերակը վատ էր, նա բան չէր ուտում, հետզհետէ նրա թուլութիւնը աւելանում էր և վերջապէս հասաւ ճգնաժամը, երբ պիտի վճուէր՝ կապրի թէ կը մեռնի:

Այն ինչ մօր դրութիւնը վատանում էր, որդին սկսել էր կամաց կամաց առողջանալ: Տան մէջ ամենքը ուրախ էին. նոյն իսկ Յիբօն զգում էր ուրիշների բերկրանքը, զարթացել էր, սկսել էր պատասխանել երեխաների հանաքներին:

Բագրատը, որ դեռ չէր ասել իր կնոջը խանութի մասին, վճուել էր այժմ ասել, թէև նա տակաւին վախենում էր, որ այդ լուրը շատ մեծ հարւած կը լինի Աննայի համար: Սակայն մեծ եղաւ նրա զարմանքը, երբ Աննան ասաւ.

— Շնորհակալ լինենք Աստուծոց, որ նա խնայեց քեզ ու մեր երեխաներին, իսկ աղքատութիւնից ես չեմ վախենում. առաջին անգամ չէ... — ու ընկաւ իր ամուսնու գիրկը:

Բագրատի սիրտը քնքշութեամբ ու երախտագիտութեամբ լցւեց: Նա իրան երջանիկ էր զգում այդ ըոպէին: Իր մէջ նա ուժ էր զգում չը յուսահատուելու ու նորից սկսելու իր աշխատանքը, իր բախտը կուրու համար:

Մարդ ու կին սկսեցին խորհրդակցել, թէ ինչպէս նոր կեանք սկսեն: Աննան այլևս ոչ մի կերպ չէր ուզում մնալ Բագուում: Սկզբում մտադիր էին գնալ իրանց ծննդավայրը, ուր թէ Աննան և թէ Բագրատը ազգականներ ունէին: Բայց յետոյ վճռեցին գնալ Թիֆլիս, որտեղ Բագրատը յոյս ունէր իր համար աւելի շուտ մի յարմար գործ գտնել: Բագրատը եռանդով սկսեց իր գործերը կարգի բերել, ունեցած հաշիւները վերջացնելու համար: Ամենից առաջ նա իրան պարտական էր զգում Յակոբի առաջ: Յակոբի ժողոված փողերը գտնուում էին առևտրական շրջանառութեան մէջ Բագրատի խանութում: Այժմ Բագրատը սնանկացել էր, բայց այդ գումարը պէտք էր վերադարձնել Յակոբի մօրը ինչ որ էլ լինէր: Կանխիկ փող նրա մօտ մնացել էր մօտաւորապէս այնքան, որքան նա պարտ էր Յակոբին, սակայն մի որոշ գումար էլ պէտք էր ունենալ ճանապարհի ծախս և նոյնպէս Թիֆլիսում ապրելու համար, մինչև որ Բագրատը մի գործ գտնէր: Վճռեցին ծախել տան կահաւորութեան մի մասը:

Երկու շաբաթ էր անցել կոտորածից յետոյ: Միհրանը բաւականին կազդուրւել էր ու սկսել էր ընտելանալ իր նոր կացութեանը: Ծանր հիւանդութիւնը մասամբ թեթևացրել էր նրա համար իր կորուստի ցաւը. նա սպառել էր տղայի ուժեւորի հետ նաև նրա վշտի ուժն, և երբ Միհրանը ուշքի եկաւ


ու սկսեց առողջանալ, նա կարծես նորից ծնւում էր նոր ըն-
տանիքում, նոր մարդկանց մէջ: Պետրոսեանները խնամքն ու
նրանց ցոյց տւած քնքշութիւնը մտերմացրին Միհրանին. նա
իրան այլևս այնքան մենակ ու օտար չէր զգում: Իր ծնողնե-
րի, Խէչօյի յիշատակը թէև շարունակում էր տանջել նրան,
բայց այդ տանջանքը այլևս չէր սպառնում մաշել նրան, ինչ-
պէս այդ կը լինէր, եթէ չը գար փրկարար հիւանդութիւնը:
Միհրանը սկսում էր հաշտւել իր վիճակի հետ:

Սկզբում Միհրանը չէր ասում, որ հեռուոր քաղաքում
դեռ մի տառ ունի կենդանի. նոյն իսկ մեծերի հարց ու փոր-
ձին նա պատասխանում էր, որ էլ ոչ ոք չունի աշխարհիս ե-
րեսին: Նրան թւում էր, որ հօր, մօր, Խէչօյի մահից յետոյ
այլևս ոչ մի ազգական կամ բարեկամ չի մնացել. նա էլ ոչ-
ոքին չէր յիշում: Բայց մի անգամ բոլորովին պատահական
կերպով ասել էր իր տատի մասին: Սակայն երբ Բագրատը
ուզեց նամակ գրել տատին, որ Միհրանը կենդանի է և իրանց
մօտն է, նա այնպէս սկսեց լալ ու այնպէս աղերսել, որ Բագ-
րատն իր միտքը թողեց: Միհրանը ասում էր, որ սիրում չէ
տատին: Առանց մօր, հօր, Խէչօյի ի՞նչ պիտի անէր նա այն-
տեղ. նա աւելի շուտ կը ցանկար մնալ Պետրոսեանները մօտ:

Աննան շտապեցնում էր ամուսնուն: Բագրատն ինքն էլ
աշխատում էր շուտով կարգի բերել գործերը ու թողնել այս
քաղաքը: Վերջապէս մեկնելու օրը հասաւ: Ամենքը զւարթ
էին. նրանց թւում էր, որ նոր քաղաքում նոր բախտ կը գրու-
նեն. Միհրանն էր մենակ տխուր:

Երբ նրանք նստեցին կառախումբը ու գնացքը սկսեց
շարժւել, Միհրանը յանկարծ սոսկաց. նրան թւաց, որ թող-
նելով այս քաղաքը նա վերջնականապէս բաժանւում է իր
ծնողներից ու կորցնում է ընդմիշտ նրանց գտնելու յոյսը.
նա դեռ հաւատում էր, որ նրանք կենդանի են: Նա մոլորւածի
պէս վեր թռաւ իր տեղից և ուզում էր դուրս ցատկել կառ-
քից: Նրան բռնեցին. նա ընկաւ նստարանի վրա ու սկսեց
դառն հեկեկալ: Ուրիշ ուղևորների ուշադրութիւնը նրա վրա

դարձաւ: Սուրէնն ու Շուշիկը նոյնպէս սկսեցին լալ: Միհրա-
նը երկար լալիս էր ու վերջը քնեց:
Գնացքը արագ սլանում էր:



Գ Լ ՈՒ Ե Ն.

Ն ո Ր Բ ա դ ա Բ ու մ

Մի պայծառ, խաղաղ առաւօտ էր, երբ Պետրոսեանները թիֆլիսի կայարանից երկու կառքերով, մեծ ու փոքր կապոցներով, արկղներով ու արկղիկներով բեռնաւորուած, մտնում էին քաղաք: Մեծերը յուզուած և անհանգիստ էին. այստեղ նրանք պիտի նոր կեանք սկսէին, բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով, նրանք դեռ չըզիտէին, և այդ անորոշութիւնը խռովում էր նրանց սրտները: Երեխաները հետաքրքրութեամբ նայում էին շուրջը, ելէկտրաքարշերի զանգերը, արագ սլացող կառքերի խելագար ընթացքը, մանրավաճառների կանչերը, գեղեցիկ սնները և բարձր ծառերը, շարք շարք ծառերը — այդ ամենը առաւօտեան թարմութեան մէջ անջքան հրապուրիչ, անջքան հետաքրքրական էր երևում նրանց: Սուրիկը, Շուշիկն ու Միհրանը նայում էին իրանց շուրջը զւարթ դէմքերով, անդադար հարցեր էին տալիս ծնողներին, բացականչում: Յիբօն, որ ամբողջ ճամփորդութեան միջոցին պառկել, կծկւել էր վազօնի նստարանի տակ մի անկիւնում, զանազան արկղների ու զամբիւղների մէջ թաք կացած, այժմ կանգնել էր կառքի մէջ և անդադար հաչում էր...

Մինչև բնակարան գտնելը Պետրոսեանները որոշել էին մի հիւրանոցում իջևանել: Սակայն որ հիւրանոցը որ գնում էին, ամեն տեղ նրանց ասում էին, թէ ազատ տեղ չըկայ — բոլոր սենեակները լցւած էին Բագրից փախածներով: Վերջապէս երկար որոնումներից յետոյ նրանք մի սենեակ գտան բազարի մօտ, տարիներով չըսրբւած պատուհաններով և վաղուց արդէն ներկերը խուճացած պաստառներով: Ժանգոտած ցուցա-

նակի վրա գրւած էր «Ֆրանսիա», իսկ դռան մօտ կանգնած էր դռնապան՝ «շվէյցարի» իւզոտած զգեստով:

Վարձած սենեակը այնքան էլ մեծ չէր, և բոլորը պիտի տեղաւորւէին երկու մահճակալների վրա, որոնց բարձերի երեսները սևացել էին: Պետրոսեանները ուրախ էին, որ գոնէ այդ անկիւնը կարողացել էին գտնել: Աննան աշխատում էր բարձր ձայնով խօսել, ուրախ երևալ, ծիծաղեցնում էր փոքրերին և երբեմն-երբեմն յանկարծ անհանգիստ հայեացքները նետում էր իր ամուսնու վրա, որ ամեն չնչին բանից սրտնեղում էր: Վարդենիկին նրանք ստիպուած թողել էին Բագու. խեղճ աղջիկը եկել էր կայարան նրանց ճամփա ձգելու, շարունակ արտասուում էր և անդադար կրկնում.

— Գնաք բարով, գնաք բարով: Հապա ես, ես ի՞նչ անեմ:

Մի կերպ երեխաներին թէյ տալուց և կերակրելուց յետոյ, Աննան ու Բագրատը գնացին բնակարան վարձելու: Բագրատը առաջ էլ մի քանի անգամ եղել էր քաղաքում իր առևտրական գործերով, իսկ Աննան առաջին անգամ էր այսուտեղ կանգնում գործերով, իսկ Աննան առաջին անգամ էր այսուտեղ, բայց երկուսն էլ իրանց զգում էին բոլորովին մենակ և տեղ, բայց երկուսն էլ իրանց զգում էին բոլորովին մենակ և տեղ, բայց երկուսն էլ իրանց զգում էին բոլորովին մենակ և տեղ, բայց երկուսն էլ իրանց զգում էին բոլորովին մենակ և տեղ, բայց երկուսն էլ իրանց զգում էին բոլորովին մենակ և տեղ:

Դանդաղ քայլերով նրանք ման էին գալիս փողոցէ փողոց, կողք կողքի, երբեմն կարճ բառեր փոխանակելով իրար մէջ: Ուր որ յայտարարութիւն էր կայցրած լինում դռներին կամ սպիտակ թղթի կտորներ պատուհաններում, նրանք մտնում, նայում էին սենեակները: Բայց ազատ բնակարաններ չէին կային, այն էլ շատ թանգ: Այդ օրը երկուսն էլ յոգնած էին և շուտ վերադարձան հիւրանոց, երեխաների մօտ: Սուրիկն ու Շուշիկը քնել էին մահճակալի վրա, իսկ Միհրանը կանգնել էր պատուհանի մօտ, ճակատը դրել էր կեղտոտ ապակուն և նայում դուրս դէպի փողոց, ուր բազարն էր երևում: Յիբօն անջիկ թաթերով յենւել էր պատուհանի տակի տախտակին ու նոյնպէս դուրս էր նայում... Արդեօք ո՞ւնի էին որոնում

նրանք փողոցով անցնող ամբոխի մէջ, ունի ձայնն էին ուզում լսել բազարի ժխորի միջից:

Միւս օրը Պետրոսեան ամուսինները կրկին ման եկան փողոցներով: Թիֆլիս նրանք մտել էին մեծ յոյսերով, անորոշ հաւատով դէպի իրենց բախտը: Բայց այժմ նրանք զգում էին, թէ որքան դժւար է լինելու իրենց կեանքը այդ ահագին անծանօթ քաղաքում, ուր ամեն կողմից թափւած էին բազմաթիւ օտարականներ, որոնելով ապաստան, պարապմունք և կարեկցութիւն...

Վերջապէս նրանք գտան մի բնակարան, երկու սենեակ և խոհանոց քաղաքի լեռնային մասում, աւելի մօտ ս. Դաւթի սարին: Կահկարասիքի մեծ մասը չնչին գնով վաճառել էին Բագում և ամենաանհրաժեշտ իրեր միայն բերել էին Թիֆլիս: Յակոբի մօրը որդու փողերը ուղարկելուց յետոյ, Բագումը վճարել էր մի քանի մանր պարտքեր և մի չնչին գումար էր մնացել իր ձեռքին: Այդ փողով նա պիտի ապրէր մինչև որ մի պաշտօն գտնէր: Նա լաւ հասկանում էր, որ իր միջոցներով սեփական գործ սկսել անկարող էր:

Անցաւ մի քանի շաբաթ Թիֆլիս տեղափոխելուց յետոյ: Բագումը զուր դիմում էր սրան-նրան, բայց ոչ մի պաշտօն չէր գտնում. խնդրողներն անվերջ էին: Ամեն օր նա աւելի և աւելի յուսահատ էր տուն վերադառնում: Մի օր էլ Աննան նրան յայտարարեց, որ կարող են սանր առանց ծառայի կառավարել, ու արձակեց իրենց վարձած ծառային, որ սենեակներն էր աւելում և խոհանոցում օգնում:

—Մենք ինքներս էլ նրա արածը կարող ենք անել,— ապա Աննան.— ապրեն մեր պատիկները, երեքը այս գիւղացի տղայի չափ էլ չըկան:

—Մենք կանենք, մենք,— կանչեցին երեխաները:

Բագումը դիտէր, որ Աննայի համար դա մի ահագին զրկողութիւն է, որ Աննան սովոր չէ ամանները լանալ, փայտ կրել, տան աղբը դուրս տանել, բայց գլուխը քարշ գցեց ս'մռայլ դէմքով տանից դուրս գնաց: Նա սարսափելով մտածում

էր թէ ինչ կըլինի իրենց վիճակը, եթէ շուտով մի պաշտօն չըգտնի: Առանց ծառայի կարելի էր մի կերպ կառավարել, երկու սենեակի փոխարէն կարելի էր մի սենեակում կուշ գալ, բայց հօ առանց հացի անկարելի էր ապրել: Եւ նա ամեն օր համարում էր իր մօտ մնացած փողերը, տեսնում էր,



որ դրանք օրէցօր հալւում են... Երբեմն կարծես մէկը իրաւական շին շին լինէր՝ «եթէ Միհրանը չըլինէր, աւելի երկար կար կըղիմանայիր, ամեն օր աւելի քիչ կըծախսէիր»: Բայց նա վրդովւում էր այդ մտքից: Այն սոսկալի օրը, երբ ինքը

ազատել էր մահաւան ճիրաններէց, այն կոտորածի անմոռալի օրը նա երգւել էր իր հոգու մէջ, որ Միհրանը իր հարազատ զաւակը կրկնէ, և այժմ երբ տեսնում էր, թէ ինչպէս փոքրիկը ոչ թէ չի ուզում ետ մնալ Սուրբիկից ու Շուշիկից, այլ աշխատում է նրանցից աւելի օգնել տան մէջ, աւելի վաղ է վերկենում, աւելի խնամքով է կարգի բերում իր անկողինը, աւելում սենեակը, աշխատում է զուր չըկեղտտել ամանները, դուրս է տանում վառարանի մոխիրը, վազում խանութ նաւթի համար,— երբ այս ամենը տեսնում էր Բագրատը, խորը զգացում էր և աւելի ու աւելի սիրում Միհրանին: Նա հաւատացած էր, որ Միհրանի ծնողները սպանւած են և ինքն իրան ստում էր.

— Ասուած իմ կեանքը խնայեց, որ այս օրբի հայրը դառնամ:

Ճշմարիտ է՝ այն օրից ի վեր, երբ իմացել էր, որ Միհրանը մի տատիկ ունի հեռու քաղաքում, նա երբեմն մտածում էր, որ իր պարտքն է գտնել այդ տատիկին և յայտնել նրան, որ թողը կենդանի է, նոյն իսկ մի երկու անգամ դրա մասին խօսք բաց արաւ տան մէջ, բայց Միհրանը կրկին ըսկսեց աղիողորմ լաց լինել, իսկ Յիբօն այդ ժամանակ տխուր ունում էր: Եւ Բագրատը վճռեց ոչինչ չանել և այլևս վիշտ չը պատճառել տղային:

— Երեւի երեխան իր տատի մօտ անբախտ է եղել, եթէ տատը նրան սիրելիս լինէր, ինքը կաշխատէր թոռանը գտնել, —ասում էր նոյնպէս և Աննան, որին մեծ ուրախութիւն էր պատճառում հոգ տանել Միհրանի մասին. նա էլ համոզւած էր, որ Միհրանի համար է Ասուած պահպանել Բագրատի կեանքը և բաշխել իրեն ու իր զաւակներին: Եւ իր բարի սրբտի մէջ նա տեղ էր աւել Միհրանին իր Սուրբիկի ու Շուշիկի կողքին...

Մի օր Բագրատը տուն վերադարձաւ գրեթէ հեւլով: Նա արագ մօտեցաւ Աննային ու խորհրդաւոր ձայնով յայտարարեց, որ պաշտօն է գտել: Քաղաքի փողոցներով շրջելիս նա

մի անկիւնում կարդացել էր սալտակ կտաւի վրա ահագին կարմիր տառերով գրած.

«Այստեղ շուտով բացւելու է եղբարք երւանդեաններէ մանուֆակտուրի խանութը»:

Երւանդեանները ծանօթ բազւեցի վաճառականներ էին. նրանց խանութն էլ ենթարկւել էր մեծ վնասների, ապրանքի մեծ մասը կողոպտւել էր, բայց նրանց ձեռքին մնացել էր մի զրամագլուխ, որով նոր գործ էին սկսում Թիֆլիսում: Բագրատին նրանք լաւ էին ճանաչում, շատ անգամ նրա հետ գործ էին ունեցել և սիրով նրան ընդունեցին այժմ իրենց նոր խանութում գործակատար:

— Կար ժամանակ, որ ես ինքս 60, 70 ուրբլի էի վճարում իմ գործակատարներին, իսկ հիմա պէտք է 40 ուրբլու համար ուրիշների մօտ ծառայեմ, — աւելացրեց Բագրատը կարծես դառնութեամբ:

Բայց Աննան այնպէս ուրախ էր այդ առաջին աջողութեան վրա, որ ամուր գրկեց Բագրատին, համբուրեց Սուրբիկին, Միհրանին, Շուշիկին, շոյեց Յիբօի բրդոտ մէջքը և սկսեց խօսել, թէ այժմ ամեն նեղութիւն վերջացաւ, ամեն ինչ կարգի կընկնի, տուն ու տեղը կրկին կը սարքւի, երեխաները կերթան դպրոց— նրա ամենամեծ փափազը հենց այդ էր, որ կարողանայ լաւ ուսում տալ իր զաւակներին:

Ձարմանալի համով թւաց այդ օրը ամենքին՝ նրա պատրաստած կերակուրը, և սենեակների առաստաղները կարծես աւելի բարձրացել էին ու պատերը կարծես աւելի լայնացել:

Հենց յաջորդ օրւանից Բագրատը սկսեց ծառայութեան դնալ:

Ի հարկէ, 40 ուրբլիով ապրել այնպէս, ինչպէս նա մի ժամանակ ապրում էր, անհնարին էր, բայց զոնէ սենեակի վարձն ու մի կտոր հացը ապահովւած էր: Տան մէջ Աննան ու երեխաները առաջւայ պէս անխոնջ աշխատում էին: Խեղճ կինարմատը դժւար էր ընտելանում նոր կացու-

թեանը, շատ էր թուլանում շուկայ գնալուց, ամբողջ օրը ստին, կերակուր եփելուց, լացք անելուց, կարկանդակուց, բայց հետզհետէ սովորում էր և արդէն այնքան էլ շուտ չէր յոգնում: Միայն թէ առաջայ պէս, երբ պառկում էր քնելու, զգում էր որ բռնների տակերը, տապանները ցաւում են: Փոքրերը նրան օգնում էին, ինչքան կարող էին, բայց տան գործը անհատնում էր:

Պետրոսեանների բնակարանը ս. Դաւթի սարի ստորոտումն էր: Երեխաները սիրել էին այդ սարը: Նրանք ամեն օր բարձրանում էին ոլորապտոյտ շաւիղով մինչև ս. Դաւթի տաճարը, երբեմն աւելի վեր, մինչև սարի գագաթը, ուր Շուշիկի փոքրիկ ոտները հազիւ էին մագլցում: Եւ Յիբօն, անբաժան Յիբօն, միշտ նրանց հետ էր լինում, ամենքից առաջ էր ընկնում և վերևից դիմաւորում էր նրանց հաչելով: Եւ սարի գլխին նստած, իր ընկեր շան վիզը զրկած, Միհրանը երգում էր Սուրիկի ու Շուշիկի հետ այն երգերը, որ սովորել էր մանկական պարտէզում:

Գ. Լ. ՈՒՆ Զ.

Հիւանդանոցում

Մարիամը արդէն մի շաբաթ է պառկած էր հիւանդանոցի երկար սրահներից մէկում, ուր պատերի տակ շարւած էին ուրիշ հիւանդների մահճակալներ՝ միատեսակ մոխրագոյն վերմակներով ծածկւած: Փոքրիկ սեղանների վրա՝ անթիւ սրակներ, մեծ ու փոքր շիշեր, սպիտակ ու դեղին թղթիկներով: Դեղերի հոտը կարծես սառել էր օդի մէջ և դիպչելով դրսից ներս մտնող առողջ մարդու քթին՝ մի տեսակ անհանգստութիւն և վախ էր ազդում նրան և ցանկութիւն՝ շուտով դուրս գալու նորից մաքուր օդ: Բարձերի վրա երևում էին հիւանդների դալուկ դէմքերը—երբեմն վերմակի վրա ձգւած ընկած էր լինում մի անշարժ ձեռք, անուժ, նիհար, երակները կապոյտ: Սպիտակ հագնւած հիւանդասրահ կանայք փափուկ քայլերով ման էին գալիս մահճակալների միջև և դեղ տալիս հիւանդներին, ուղղում նրանց բարձերը և վերմակները, միթիւթարում մեղմօրէն և ամենայն հոգս քաշում: Տեղտեղ լսում էր ցածրաձայն խօսակցութիւն կամ որևէ հիւանդի հառաչ: Երբեմն երևում էին բժիշկներ և մօտենում էին հիւանդներից մէկին, միւսին, քննում էին, վէրքերը կապում: Հիւանդների մեծ մասը վիրաւորներ էին:

Մարիամը պառկած էր ուշաթափ: Գնդակը հանել էին նրա կողքից, բայց նա արիւնաքամ էր եղել և սաստիկ թոյլ էր: Նրան քննելիս բժիշկները խորհրդաւոր կերպով գլուխները էր շարժում էին և ոչինչ չէին ասում: Մարիամը ուշքի չէր գալիս, չէր խօսում, հիւանդասրահ քոյրը գլուխը բարձրացնում

էր և զօռով մի քանի գդալ մտաշուր էր լցնում նրա բերանը: Վերջապէս մի օր նա բաց արաւ աչքերը և նայեց իր շուրջը: Նրա հայեացքը ընկաւ իր մահճակալի մօտ նստած հիւանդապահ կնոջ վրա: Մարիամը երկար նայում էր նրա բարի ու մի քիչ տխուր դէմքին և փորձեց խօսելու: Մի քաջանի թոյլ, անկապ հնչիւններ դուրս թռան նրա բերանից: Հիւանդապահը գլուխը կռացրեց նրա գլխակալին, բայց ոչինչ չը կարողացաւ հասկանալ: Շուտով Մարիամը նորից աչքերը փակեց և սուզեց մոռացութեան մէջ:

Միւս օրը նրա ուժերը նկատելի չափով աւելացել էին. երբ հիւանդապահ կինը մօտեցաւ նրան, նա սկսեց խօսել թոյլ, ընդհատող ձայնով: Կինը գլուխը ամբողջովին թեքել էր նրա բարձի վրա և ճգնում էր հասկանալ նրա խօսքերը:

— Գիտեմ... ամուսինս սպանւած է... — շնչում էր Մարիամը, — բայց որդիս... Միհրանս... Ո՞ւր է Միհրանս: Նա կենդանի է. նա պիտի կենդանի լինի...

Կինը կարեկցաբար շփում էր նրա ձեռքը և կրկնում.

— Միք յուզւիլ, տիկին. հանգիստ կացէք, դուք կառողջանաք ու կը գտնէք ձեր որդուն:

— Իմացէք, իմացէք, — պնդում էր Մարիամը — գուցէ նրան էլ սպանել են: Ո՞հ...


— Ձեզ զսպեցէք, սրտապնդեցէք: Աշխատեցէք շուտով առողջանալ, ինքներդ որոնել ձեր որդուն: Նա անշուշտ կենդանի է, — հաւատացնում էր գթութեան քոյրը:

Այն ըստէից ի վեր ինչ ուշքի էր եկել, Մարիամի հոգեկան զրութիւնը անտանելի էր: Նրա միտքը շարունակ Միհրանի հետ էր, նա զանազան ենթադրութիւններ էր անում: Նա համոզւած էր որ Խէչօն կարողացած պիտի լինէր նրան փրկել: Սակայն ո՞ւր են նրանք այժմ, առանց փողի, առանց հովանաւորողի, օտար քաղաքում: Ո՞վ կարող է մի լուր բերել նրանց մասին: Իսկ եթէ նրանց էլ պատահել են թուրքերը, եթէ գնդակները... Ա՛հ...

Հարկաւոր էր համբերութեամբ սպասել, սպասել մինչև

առողջանալը: Երբեմն նա մտաբերում էր իր սպանւած ամուսնուն, իրենց երջանկութիւնը, և արտասուքները հոսում էին նրա երկար թերթերունքների միջով, գունատ այտերի վրայով: Նրա սրտի մէջ ապրում էր այժմ միայն մի իղձ, հոգին ամբողջովին լցւած էր մի անհուն ցանկութիւնով — գտնել Միհրանին, սեղմել նրան իր կրծքին, որը այնպէս ցաւում էր:

Միւս օրը բժիշկը, որ մի հաստիկ պարօն էր անագին ակնոցով և հեգնտա աչքերով, եկաւ Մարիամին քննելու: Նա գոհ



էր որ վիրաւորը աւելի լաւ էր զգում իրան, և վստահացնում էր, որ եթէ այդպէս զնայ, անպատճառ կառողջանայ:

— Դուք պէտք է աշխատէք լաւ սնունդ առնել և որքան կարելի է հանգիստ մնալ, — խորհուրդ էր տալիս բժիշկը:

— Ա՛հ, բժիշկ, բժիշկ, ի՞նչպէս կարող եմ հանգիստ մնալ: Իմ գաւակս, իմ Միհրանս, գուցէ նա էլ... կենդանի է արդեօք... Ո՞րտեղ է նա...

— Հանգստացէք, տիկին, ես կօգնեմ ձեզ, որքան կարող

եմ, —ասաւ բժիշկը կարեկցաբար: — Ես բաւականին ծանօթներ ունիմ քաղաքում, գուցէ կարողանամ մի բան անել ձեզ համար և ձեր զաւակի համար: Վաղը ինձ ամեն ինչ կը պատմէք...

Մարիամը ջերմ երախտագիտութեամբ բռնեց նրա ձեռքն ու ամուր սեղմեց: Նա անհամբերութեամբ սպասում էր այդ «վաղ»-ին և երբ ճիշտ իր ժամին բժիշկը մօտեցաւ նրա մահճակալին ու մտերմաբար ողջունեց նրան և ապա սպեղանին փոխելով՝ յայտնեց որ այսօր շատ աւելի լաւ է քան երէկ, Մարիամը բացականչեց.

— Ճշմարիտ է, ճշմարիտ, պ. բժիշկ, ուրեմն ես շուտով կը կարողանամ այստեղից դուրս գնալ և իմ տղային էլ գտնել:

Բժիշկը սկսեց հարց ու փորձ անել տիկնոջ ամուսնու, Միհրանի, ամբողջ ընտանիքի մասին: Մարիամը տալիս էր մանրամասն տեղեկութիւններ:

Այնուհետև սկսեցին սպասումների սոսկալի օրեր: Ամեն անգամ, երբ բժիշկը մտնում էր այն սրահը, որտեղ պառկած էր Մարիամը, դռան շէմքից նա հանդիպում էր խեղճ մօր յառած աչքերին: Հազիւ զսպւած յուզմունքով Մարիամը նրան հարց ու փորձ էր անում — արդեօք որևէ տեղեկութիւն կ'ա՞յ: Բժիշկը մի առաւօտ ասաւ, որ անձամբ գնացել է այն բոլոր տեղերը, ուր հաւաքելիս են եղել սպանւածների դիակները, և տեղեկացել, որ ոչ մի մանկական դիակ չեն բերել՝ Միհրանի կերպարանքով և զգեստով: Ոչ մի գերեզմանատան հողին չեն յանձնել մի այդպիսի մանուկ: Ուրեմն Միհրանը կենդանի է, ասում էր Մարիամը ինքն իրան. — չէ, նա կենդանի պիտի լինի, անկարելի է որ ճակատագիրը մէկ անգամից զրկէ իրեն և ամուսնուց, և զաւակից:

Եւ խեղճ մօր երեւակայութեան առջև պատկերանում էր, թէ ինչպէս Միհրանն ու Խէչօն իրեն որոնելիս պիտի լինեն. երեւի Խէչօն գերեզմանատներն է ման գալիս և իր տէրերի դիակներն է այնտեղ որոնում, և չի գտնում Մարիամին: Խէչօն անշուշտ պիտի հասկանայ, որ Մարիամը կենդանի է, նա

կ'որոնի հիւանդանոցներում իր տիրուհուն, նա գալու է, գալու է և այս հիւանդանոցը:

Եւ Մարիամը սրտի արագ բաբախով, շնչակտուր ականջ էր դնում նրբանցքից հասնող իւրաքանչիւր ոտնաձայնին և իրան թւում էր թէ ուր է, ուր չէ՝ կերևայ սրահի դռան մէջ իր հաւատարիմ Խէչօն: Զո՛ւր յոյսեր:

Մի առաւօտ էլ բժիշկը եկաւ և յայտնեց, որ չըճանաչւած դիակների մէջ եղել են երկուսը, որոնք նման էին Խէչօյին ըստ տիկնոջ նկարագրութեան: Այս բանը անսահման խռովութիւն առաջացրեց Մարիամի հոգու մէջ: Մինչև այդ ըոպէն նա հաւատացած էր, որ Խէչօն փրկել է իր Միհրանին և գուցէ նոյն իսկ հնար է գտել նրան կրկին Հաշտարխան տանելու կամ հենց իր ծննդեան քաղաքը՝ Մողղոկ: Իսկ հիմա, երբ կարծես ճշտւում էր, որ նա էլ սպանւած է, Մարիամը մտածում էր.

— Որ այդպէս է, Միհրանն էլ երևի սպանւել է... կամ գուցէ նրան գերել են, և այժմ նա տարւած է որ և է թիւրքական գիւղ, անմատչելի սարերի մէջ...

Եւ ապաբախտ մայրը ծածկեց իր գլուխը վերմակով և սկսեց դառն հեկեկալ: Նա պնդում էր մի յամառ հաւատով, թէ իր Միհրանը կենդանի է, կրկնում էր այդ գրեթէ բարձրաձայն՝ իրեն համոզելու համար, ամեն ըոպէ, ամեն վայրկեան և ապրում էր այժմ մի մտքով, որ շուտով առողջանայ, դուրս գայ և որոնի նրան, իր անպաշտպան, մենակ մնացած, դռնէ դուռ ընկած, անտէր զաւակին...

Եւ նա ծրագրերն էր կազմում թէ ինչպէս կ'որոնի Միհրանին, ո՛ւր և ում կը դիմի: Եւ յանկարծ յիշեց, որ ինքը փող չունի և որ առանց փողի չի կարողանայ իր որոնումներն աշունել: Այդ ըոպէին նրա մտքովը անցաւ, որ տանից փախչելու ժամանակ իր զոհարեղէնը կարել էր շրջագոգեստի մէջ, և կանժամանակ իր զոհարեղէնը կարել էր շրջագոգեստի մէջ, և կանչելով հիւանդապահին՝ պահանջեց որ իր զգեստները բերեն: Գոհարները այնքան լաւ էին կարւած զգեստի մէջ, որ անկարելի էր նկատել. նրանք մնացել էին ձեռք չըտւած:

Կրկին շաբաթներ անցան. Մարիամը արդէն այնքան կազ-
դուրւել էր, որ կարող էր հիւանդանոցի պարտէզում զբօսնել:
Վէրքը դեռ բոլորովին չէր լաւացել, երբ նա դուրս եկաւ հի-
ւանդանոցից, և մի սենեակ վարձեց հիւրանոցում: Նա հետզ-
հետէ մաս-մաս ծախում էր իր գոհարեղէնը, բայց զին տւող
չըկար: Հարուստները թողել էին քաղաքը, իսկ ակնավաճառ-
ներն էլ՝ վախենալով կողոպտումից կամ փակել էին իրենց
խանութները և թաք կացել, կամ մտել էին թուրքերի հովա-
նաւորութեան տակ և աշխատում էին նրանց ձեռքից դնել
կողոպտած ոսկեղէնը, արծաթեղէնը և թանկագին ակները:
Մարիամը իր զարդերի համար հազիւ կարողանում էր չնչին
գումար ստանալ:

Գ Լ Ո Ւ Խ Է:

Ո Ր Ո Ն Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Նա սկսեց իր որոնումները:

Նա մենակ էր այդ մեծ քաղաքում. ոչ մի բարեկամ, ոչ
մի կարեկից մարդ: Այն փոքրաթիւ ընտանիքներից, որոնց
հետ կարելեանները ծանօթացել էին Բագու տեղափոխւելուց
յետոյ, ոմանք հեռացել էին քաղաքից, ոմանք էլ իրենք այն-
քան կորուստներ էին ունեցել, որ իրենց ապաբախտութիւններով
քան կորուստներ էին ունեցել, որ իրենց ապաբախտութիւններով
էին զբաղւած և կարող էին օգնել միմիայն մի քանի խոր-
հուրդներով: Ամեն մէկը իր հոգսերն ունէր, իր ցաւերը, և
այդ վշտերի ու արտասուքների ծովի մէջ Մարիամի կակիժը
մի կաթիլ էր միայն:

Նա նախ և առաջ այցելեց իրենց հին բնակարանի տեղը:
Ամեն ինչ կրակի ճարակ էր դարձել, մոխրի ու սևացած ա-
ղիւսների մի ահագին կոյտ: Տեղ-տեղ դուրս էին ցցւած ածխա-
ցած գերաններ, ծուած երկաթներ և սևացած պատերի մնա-
ցորդների վրայից վեր էին տնկւած ծխնելոյզները: Եւ այսպէս
ամբողջ փողոցը:

Մարիամը կանգ առաւ և պղտոր աչքերով նայում էր ա-
մեն կողմ: Ահա իրանց տունը. այստեղ էր նրա երջանիկ ըն-
տանեկան կեանքի մեղմ ճրագը վառւում, այստեղ ինքն ու
Գերասիմը այնքան երազել են ապագայ պայծառ կեանքի
մասին: Բոլորը այրւեց, և՛ այդ տունը, և՛ այն երազները—
ամենը ծուխ դարձան ու մնաց գորշ մոխիրը միայն: Եւ Մա-
րիամը զգաց մի անսահման մենակութիւն, սիրտը ճնշող, խոր-
տակող մենակութիւն: Կուռ, կարծես իր ամբողջ գոյութիւնը
մոռացած, առանց արտասուել կարողանալու, նա երկար ժա-

մանակ մի տեղ կանգնած էր, ու յետոյ կամաց շրջեց, առանց ետ նայելու, մտամոլոր, դանդաղ քայլերով:

Եւ ապա նա եկաւ այնտեղ, այն փողոցը, որտեղ ընկել էր գնդակահար եղած Գերասիմը և նրա վրա ինքը: Ահա հենց այս քարերին փուլած էր նա, իր կեանքի ընկերը, իր հպարտութիւնը. նա այլ ևս չըկայ: Այստեղից Խէչօն փախցրեց Միհրանին: Ու՞ր, ո՞ր կողմը:

— Ո՛հ, անգին Գերասիմ, եթէ քո հոգին որևէ տեղ դեռ կայ, դու առաջնորդիր ինձ մեր գաւակին գտնելու:

Եւ ինչպէս մի նուրբ հոտառու շուն՝ մայրը աշխատում էր իմանալ, թէ ո՞ր կողմը կարող էր փախցրած լինել իր Միհրանը, և հարցական հայեացքները ուղղում էր ամեն մի պատուհանի, սպասելով թէ այնտեղից կերևայ իր գաւակի սիրուն դէմքը, ահանջ էր դնում ամեն մի տան դռանը, յոյս ունենալով թէ նրա ետևից կըհնչի նրա, իր Միհրանի անուշ ձայնը:


Նա երևաց և գերեզմանատներում: Ապշեցնող համբերութեամբ նա մի քանի օր իրար ետևից գալիս էր միևնոյն լուռ քարերի և մահարձանների մօտ ու հարց ու փորձ անում գերեզմանատան ծառայողներին: Նա շրջեց բոլոր քահանաների տները, քրքրեց բոլոր մատեանները, որտեղ գրւած էին թաղւածների անուններն և ցուցակները: Եւ ոչ մի տեղ չը գտաւ իր Միհրանի հետքը:

Նա գտաւ միայն իր ամուսնու գերեզմանը: Գերասիմը թաղւած էր ուրիշների հետ միասին, մի ընդհանուր գերեզմանի մէջ: Մարիամը քահանայ հրաւիրեց և հոգեհանդիստ կատարել տաւ: Ու երկար նստած էր նա այդ թմբի մօտ, ձեռքը նրա վրա փռած, գլուխը հողին դրած, կարծես հարցնելիս լինէր.

— Գերասիմ, իմ Գերասիմ, ո՞ւր է մեր Միհրանը, մեր գաւակը.

Նա գտաւ և Խէչօի նման մարդկանց գերեզմանները: Մարիամը երկար աշխատում էր ստուգել բժշկի ասածները, և

այնքան հակասական ցուցմունքներ էր ստանում ամեն կողմից, որ դեռ յոյս ունէր թէ Խէչօն կենդանի է: Նա հեռագրեց Գերասիմի մօրը, տեղեկացնելով իրեն պատահած դժբախտութեան մասին և հարցնելով Խէչօն և Միհրանը նրա մօտ չէ՞ն արդեօք, այնտեղից պատասխան եկաւ, որ Միհրանի մասին ոչ մի տեղեկութիւն չունեն, իսկ տատը՝ լուրը ստանալուն պէս կաթլածահար է եղել: Այնուհետև մի այլ հեռագրով կարե-



լեանների կառավարիչը հաղորդեց, որ տատը վախճանւել է, գործերը խառն են մնացել, ժառանգութեան խնդիրը անորոշ է, պէտք է շտապել—գալ:

Մարիամը հեռագրեց և Մոզդոկ, Խէչօի ազգականներին. — ոչ մի պատասխան չըստացաւ: Այն ժամանակ նա սկսեց շրջել բոլոր որբախնամ ընկերութիւնները, ոստիկանատները, մի քանի անգամ յայտարարութիւններ գետեղեց տեղական լրագիրների մէջ—բոլորը զուր: Նա անձամբ գնաց ազդեցիկ թուրքերի մօտ. աղաչում-պաղատում էր նրանց իրեն օգնել,

տեղեկութիւններ հաւաքել իրենց հաւատակիցիների մէջ կորած մանկան մասին, տալիս էր նրանց Միհրանի լուսանկարները, որը հարիւրաւոր օրինակ տպել էր տւել—բոլոր ջանքերը սպարդիւն էին. տղայի հետքը չըկար ու չըկար:

Ծախած գոհարներից ստացւած փողը արդէն հատնելու վրա էր. նա հարկադրւած էր առատաձեռն վարձատրել իւրաքանչիւրին, ով այս կամ այն կերպ կարող էր օգնել իրեն տեղեկութիւններ հաւաքելու, իսկ գործերի կառավարիչը փող չէր ուղարկում և միշտ միւսնոյնը գրում որ շտապի, շուտ գայ, եթէ չի ուզում որ Գերասիմի ազգականները ամբողջ կարողութեանը տիրանան:

Երկար տատանւում էր Մարիամը. Բագուն թողնել նա չէր ուզում: Այդ կընշանակէր՝ ընդմիշտ կորցնել զաւակի հետքը: Ամեն առաւօտ նա վեր էր կենում նոր և նոր յոյսերով և երեկոյեան իր սենեակը վերադառնում յուսախաբ, յոգնած: Բոլոր իր գիտեցած միջոցները սպառած՝ նա վերջապէս մի մտքի վրա կանգ առաւ.

— Խէչօն մեռած չէ. նա Միհրանին տարել է իր մօտ Մոզզոկ:

Թէև մի այլ ձայն նրան ասում էր, որ եթէ այդ այդպէս լինէր, Խէչօն այնուամենայնիւ մի բան յայտնած կըլինէր տատին կամ կալաժների կառավարչին, բայց Մարիամը չէր ուզում այդ ձայնին լսել, չէր ուզում համոզւել ու որոշեց անձամբ գնալ Մոզզոկ:

Այնտեղ Խէչօն ունէր քոյր: Մեծ դժւարութիւններով Մարիամը գտաւ նրա աղքատիկ տունը: Նա առաջին անգամ Մարիամից իմացաւ, որ Խէչօն անհետացել էր, և չէր կասկածում որ նա էլ սպանւել է: Մարիամի համար էլ այդ պարզ էր: Եւ երկու կանայք միասին ողբում էին՝ իւրաքանչիւրն իր վիշտը:

Ապա ուր պիտի լինի Միհրանը, եթէ նա կենդանի է: Նա Բագում չէ. այլապէս անկարելի է որ նրա խնամակալները նրա մասին որևէ լուր չըտային ոստիկանատանը, կամ

լրագիրներին, կամ մի այլ կերպ, այսքան որոնումների ժամանակ: Մարիամը հետզհետէ սկսեց այն համոզմունքի գալ, որ Միհրանին պիտի որոնել Բագուից դուրս: Բայց սրտեղ:

Նոր, աւելի դժւարին ճամփայ էր բացւում նրա տուջ, որ աւելի ծախսեր էր պահանջելու: Տիկին կարելեանը վճռեց վերադառնալ Հաշտարխան, շուտով կարգի բերել ժառանգութեան խնդիրը և նորից սկսել որոնումները:

Գ Լ Ո Ւ Ն Գ

Ա Տ Ր Ն Ա Ն Ա Կ

Բագրատը վերջին ժամանակներս աւելի ու աւելի տխուր էր տուն վերադառնում: Ստացած ռոճիկը չէր բաւականացնում և Պետրոսեանները սկսել էին ծախել տան իրերը:

Նախ ծախեցին ձմեռւայ շորերը, որ ամառը պէտք չը պիտի գային, ապա փոքրիկ գորգը, յետոյ պատի ժամացոյցը: Հնավաճառները կարծես գիտէին թէ երբ էր այդ տանը փող պակասում, ու հենց այդ ժամանակ երևում էին բախում: Տունը նկատելի կերպով դատարկում էր:

Հենց այդ ժամանակ Բագրատը ստացաւ դատարանից մի կոչնագիր. իր պարտատէրերը պահանջում էին մուրհակներով վերցրած ապրանքների փողը: Արիւնը նրա գլուխը տւաւ և սիրտը ճմլւեց. նա միայն մըթմըթաց յուսահատութեամբ.

— Այս էր միայն պակաս:

Եւ դարձաւ աւելի սակաւախօս. գլուխը աւելի ցած խոնարհւեց, մէջքը կարծես ծուեց ու ինքը ամբողջովին մի տասր տարով ծերացաւ:

Այդ օրը նա մինչև կէսգիշեր աննպատակ թափառում էր փողոցներով, խոյս տալով լուսաւորւած տեղերից և միշտ խաւար անկիւններն ընտրելով: Նա կուղենար փախչել — բայց սէր և սմմից: Երբեմն մտքովը անցնում էր ջուրն ընկնել և նոյն իսկ քայլերը դիմեցին դէպի կուր գետի կամուրջը, բայց յանկարծ կանգ առաւ. կնոջ և երեխաների պատկերները ներկայացան նրան, ու նա դանդաղ դիմեց դէպի տուն:

Աննան սաստիկ անհանգստանում էր. երբէք Բագրատը

այդքան չէր ուշացել, և այժմ նրան թւում էր թէ կրկնում է այն սոսկալի՝ Բագրայ գիշերը: Նա շփոթւած դիմաւորեց ամուսնուն: Բագրատը նրան պատմեց իր ստացած կոչնագրի մասին:

— Երբեկից կը վճարենք, Բագրատ, մենք հօ այդ ուրանալու չենք: Ասա Երևանդեաններին՝ գուցէ մի բան տան քեզ այս գլխից, ռոճիկի հաշից, վճարի: Կըսպասեն, հետզհետէ կը վճարենք:

Բագրատը կարծես համոզւեց, բայց լաւ գիտէր որ Երևանդեանների գործերը այնքան լաւ չեն գնում, որ կարելի լինէր նրանցից օգնութիւն սպասել: Այնուամենայնիւնա միւս օշը դիմեց Երևանդեաններից մէկին:

— Բագրատ, դու լաւ տեսնում ես՝ որ առևտուր չըկայ և օշական ծախսերը նոյն իսկ չենք հանում: Մեր գործերի դրութիւնն էլ ծանօթ է քեզ. գուցէ ստիպւած լինենք խանութը փակել:

Բագրատը չէր ուզում մի բոլորէ ենթադրել անգամ, որ խանութը իսկապէս կարող է փակել. միայն թէ այդ օրից սպասում էր դատարանի վճռին, որպէս մի մահավճռի:

Մի կիրակի օր երեխաները, օգտւելով այն բանից, որ հայրիկը տանն է և կարող է օգնել մայրիկին, սովորականից վաղ դուրս եկան անից ու սկսեցին սարը բարձրանալ իրենց սիրած շաւղով: Նրանց ընկերացաւ հարեան մրգավաճառի որդին, Հրանտը, որը Առևտրական դպրոցում էր սովորում: Նա դին, Հրանտը, որը Առևտրական դպրոցում էր սովորում: Նա սիրում էր ականջ դնել Սուրբիկի և Միհրանի պատմածներին: Բագրի աղէտների մասին: Ամենից շատ պատմում էր Միհրանը: Նա սննքան բան էր տեսել... Ամենից շատ նա սիրում էր նա սննքան բան էր տեսել իր Խէչօի մասին ու միշտ իր պատմութիւնը վերջացնելիս՝ ասում էր.

— Բոլորից զրկւեցի, բոլորից. միայն դու մնացիր ինձ, Յիրօ, դու գտար ինձ և ինձ մենակ չըթողիր:

Եւ Միհրանը դրկում էր իր շանը ու ամուր համբուրում նրան:

—Իմ անգին, իմ լաւ Յիբօ, դու հօ միշտ ինձ հետ կըլինես, այնպէս չէ:

Եւ շունը, պոչը թափ տալով, սիրով լի աչքերը չէր հեռացնում Միհրանի վրայից, բարձր հաչում էր, կարծես պատասխանելիս լինէր.

—Ձեմ թողնի, չեմ թողնի, չէ:

Այդ ամառը լուրեր ստացեցին թէ Բագուում կոտորածը նորոգել է. մի փոքր յետոյ նոյն տեսակ լուրեր սկսեցին հասնել և Շուշուց: Եւ երեխաները միմիայն այդ սարսափների մասին էին խօսում:

—Մենք էլ զէնք պիտի ունենանք. ի՞նչ անենք որ փոքր ենք—ասում էր միշտ Սուրբիկը, և առանձին ոգևորութեամբ խօսում էր թէ ինչ կանէր, եթէ ինքը մի ատրճանակ գոնէ ունենար:

Այդ մտքով տարւած էին և՛ Միհրանը, և՛ նրանց ընկեր չրանտը:

Եւ ահա այդ կիրակի օրը, երբ նրանք բաւականին բարձրացել էին դէպի ս. Դաւիթը ու նստել նստարանի վրահանգըստանալու, չրանտը մի առանձին գաղտնապահ ձայնով ասաւ.

—Տղէքք, գիտէք, հայրիկս խոստացաւ մի փոքրիկ ատրճանակ գնել ինձ համար:

—Ի՞նչ երջանիկ ես. իսկ ես ու Միհրանը այնքան մտածում ենք, բայց ոչ մի միջոց չենք գտել դեռ,—բացականչեց ըրիկը:

—Ոչինչ, Սուրբիկ ջան, ես մի հնար գտել եմ,—նկատեց Միհրանը:

—Ղորթ. ի՞նչ հնար:

—Գնանք, այ վերև, այնտեղ կասեմ:

Ու Յիբօի հետ միասին առաջ վազեցին ու կարճ ժամանակամիջոցում արդէն սարի գագաթին էին. այնտեղ նա նրստեց ժայռի ծայրին, ոտները կախ արած ու Յիբօին գրկած, և շտապեցնում էր ընկերներին.

—Շնուտ, շնուտ:

Երբ բոլորն էլ կողքէկողք նստեցին, Միհրանը սկսեց պատմել, որ երբ ինքը դեռ մանկական պարտէզումն էր, այնտեղ սովորել է գանազան գոյնի թղթից աստղիկներ շինել ու փայտին ամրացնել գնդասեղով: Վազելիս այնպէս լաւ պտրտւում, փռոտում են: Նա ասում էր թէ Բագուում այդպիսի աստղիկներ երեխաները փողոցում ծախում են:

—Այ, եթէ մենք էլ շինենք թղթէ փռոտան աստղիկներ ու փողոցում ծախենք, շուտով բաւականին փող կըհաւաքենք ու ատրճանակ կառնենք:

—Ի՞նչպէս կարելի է փողոցում ծախել, հայրիկը չի թողնի,—ասաւ Սուրբիկը:

Միհրանը շատ ոգևորւած էր իր գաղափարով:

—Ի՞նչ կայ որ, փողոցում կըծախենք: Ամօթ է, ի՞նչ է. ինչո՞ւ են փողոցում միրգ, լրագիր, ժապաւէն ծախում: Մենք հօ ուրիշից չենք գողանայ, մեր շինածը կը ծախենք: Ով կուզի՝ կառնի, ով չի ուզի՝ չէ: Երեխաները այնքան կուրախանան, տանը այնպէս լաւ կըխաղան...

—Ձէ, չի կարելի, չէ,—պնդում էր մանաւանդ Շուշիկը:


—Էհ, եթէ դուք չէք ուզում, ես ինքս կըշինեմ ու կըծախեմ:

Սուրբիկն ամաչեց, նա իսկոյն համաձայնեց. Շուշիկն էլ իսկ որ հայրիկն ու մայրիկը չըխանգարեն, որոշեցին ծածկել նրանցից իրենց արածը:

Պէտք էր նախ և առաջ թուղթ ու գնդասեղ գնել, իսկ նրանք փող չունէին: Երեխաները շատ լրջօրէն մտածում էին այդ հարցի մասին: Չրանտը այդտեղ նրանց յայտնեց, որ ինքը հաւաքած ունի 40 կոպէկ. այդ փողը կարող է տալ, որ յետոյ իրեն վերադարձնեն:

Հիացած նրանք տուն վերադարձան: Միւս օրն և եթ նրանք գնեցին թուղթ և գնդասեղ ու առանձնացան իրենց տան չարդախը, որտեղ սովորաբար խաղում էին, երբ մօրը օգնելու գործ չէր լինում: Շուշիկն էլ նրանց հետ էր. նա էլ շատ ուրախ էր, որ կարող էր օգնել տղաներին:

Առաջին աստղիկները գուրս էին դալիս շատ անաշող, յիսուոյ նրանց մատիկները աւելի վարժեցին, և երկու օրից նրանք արդէն ճիշտ որ շատ գեղեցիկ փոռան աստղիկներ էին շինում, որոնք փայտի ամեն մի շարժելուց՝ պտտում էին գնդասեղի վրա: Միհրանը հեղինակաւոր ձայնով սովորեցնում




էր և խիստ քննադատում իւրաքանչիւրի գործը: Վերջապէս նա ընտրեց լաւագոյնները, ամենից աշողածները, մի մասը առաւ ինքը, միւս մասը տաւ Սուրիկին, և միասին վազեցին Գուրովինսկի պրոսպեկտ: Յիբօն առաջ էր սլանում. մէկ անհետանում էր աչքից,

մէկ էլ նորից երևում, թռչկոտում իր բարեկամների շուրջը, անցորդների վրա հաչում:

— Լաւ աստղիկներ, գոյն-գոյն աստղիկներ, փոռաններ, — կանչում էին տղաները:

Կարճ ժամանակամիջոցում բոլորն էլ վաճառեցին և ուրախ ուրախ վերադարձան տուն, որտեղ նրանց անհամբեր



սպասում էր Շուշիկը փողոցի դռան առաջ: Հեռուց նրանք ցոյց էին տալիս իրենց վաստակած փողերը—65 կոպէկ էին աշխատել:

Այդ օրւանից նրանք սկսեցին յաճախ առանձնանալ իրենց չարդախում կամ հեռանալ ս. Դաւթի սարի դագաթը ու աստղիկներ շինել: Նրանք զրեթէ ամեն օր ծախում էին այդ աստղիկները: Մեծ մասամբ մէկը մնում էր տանը, իսկ երկուսը

գնում էին փողոցները: Մայրիկը խոհանոցում զբաղւած՝ յաճախ չէր նկատում նրանց բացակայութիւնը, մանաւանդ որ տանը մնացողը աւելի եռանդով էր իրան օգնում և աշխատում էր զբաղեցնել զանազան հարցերով և պատմութիւններ:



ըով: Իսկ երբ Աննան հարցնում էր թէ ո՞ւր է Միհրանը կամ Սուրբիկը, պատասխանը պատրաստ էր. — «Գնացել են էն սարը, Յիբօն էլ նրանց հետ է»:

Եթէ Յիբօն նրանց հետ է, ուրեմն ոչ մի վտանգ չի կարող պատահել:

Իսկ հայրիկը տուն էր վերադառնում բաւականին ուշ:

ԳԼՈՒԽ Թ.

Յուսահատութիւն

Վերջին օրերը արդէն ոչ մի ժպիտ չէր երևում Բագրատի դէմքին: Դատարանը որոշել էր պահանջել նրանից իր պարտքը լիովին, իսկ Երևանդեանների գործերն էլ վատ էին գնում: Կասկած չըկար, որ խանութը պիտի փակէր: Մէկ անգամ էլ այնպէս պատահեց, որ զրամարկղում փող չըկար գործակատարների ամսականը վճարելու: Այդ ամիսը Բագրատի դրութիւնը շատ ծանր էր. հացթուխին, մսավաճառին և մանրավաճառին բաւականին պարտք մնաց: Ամսւայ վերջը Երևանդեանները յայտարարեցին, որ ստիպւած են առևտուրը դադարեցնել և խանութը փակել: Ապրանքների վերջնական վաճառում նշանակւեց սաստիկ էժանացրած գներով: Մի երեք շաբաթից յետոյ ապրանքի լաւ տեսակները արդէն ծախւած էին, մնացորդն էլ Երևանդեանները մեծ զեղջով տւին մի ծանօթ վաճառականի՝ փողը մաս-մաս ստանալու պայմանով:

Բոլոր գործակատարները իրենց ռոճիկները ստացան: Ստացաւ և Բագրատը, մէկ ամսւայ վարձատրութիւնն էլ աւելի, և ինչ որ տան համար ապրանք էր վերցրել՝ նրա արժէքն էլ իրան բաշխեցին:

Այսպիսով նա կրկին մնաց անպաշտօն, անգործ:

Բագրատը շտապեց իր արած պարտքերը վճարել, և դէս ու դէն ընկած՝ առաւօտից մինչև երեկոյ տեղ էր որոնում: Ինչ վարձատրութիւնով էլ լինէր, թէկուզ միայն մի շոր հացի դին — պատրաստ էր ստանձնել:

Եկաւ վրա հասաւ վերջապէս սոսկալի օրը, այն օրը, ու-

ըից այնպէս վախենում էր Բագրատը: Երբ երեխաները քնեցին, և ամուսինները սեղանի մօտ նստած խօսում էին, Աննան նկատելով ամուսնու յուսահատ դէմքը, մօտեցաւ նրան ու ձեռքը ուսին դրած՝ փորձեց մխիթարել:

— Բագրատ, յոյսդ մի կորցնի, Աստուած ողորմած է: Յիշում ես, այն ժամանակն էլ այսպէս էր, բայց վերջապէս մի պաշտօն գտար:



— Բայց լսիր, Աննա, քեզ չեմ ասել... Ես ոչ մի կոպէկ չունեմ, ոչ մի կոպէկ. վաղը հաց առնելու սև փող էլ չունեմ...

— Սուս, կամաց, երեխաները կըզարթնեն:— Եւ յետոյ շնջալով Աննան շարունակեց. — Հացթուխից կարող ենք պարտրով առնել:

— Ձի տալիս, գիտէ որ պաշտօն չունեմ:

— Ոչինչ, առանց հացի մի կերպ կը կառավարւենք. տանը մի քանի գրւանքայ կարտօֆիլ կայ, կեփենք, կըկշտանանք:

— Այդ վաղը, իսկ միւս ժրը, ասում էր Բագրատը տեղից վեր կենալով:

— Իսկ յետոյ...

Այս ասելով Աննան կանգ առաւ յանկարծ: Երևում էր, որ մի ծանր, անտանելի կոխ էր կատարւում նրա հոգու խորքում: Ապա վճռապէս և արագ հանեց նա իր մատանին և դրաւ Բագրատի բութը:

— Ահա, սուս, վաղը գրաւ դիր, ծախիր,— մըմնջաց նա:

— Ի՞նչ ես անում, ի՞նչ, Աննա, չէ որ դու երգել ես երբէք չըբաժանւել սրանից: Չէ որ սա իմ առաջին ընծան է, մեր սիրոյ կապը...

Աննան մի բան էր ուզում ասել, բայց էլ չըզիմացաւ և ընկաւ նրա ուսին ու աղեկտուր սկսեց հեկեկալ:

Սուրբիկն ու Շուշիկը ամուր քնած էին. Միհրանը սակայն աչքերը խփած մտածում էր: Նրան այնպէս թւաց, թէ իր մայրիկը կողքին նստած է. նա զգում էր մայրիկի տաք մերձաւորութիւնը և մի ախորժ նիրհի մէջ չէր համարձակւում վերմակի տակ շարժւել: Եւ այդ բոլէին նա լսեց Բագրատի և Աննայի խօսակցութիւնը, բոլորը, և ամեն մի խօսքը էն հրացանների տրաքոցների նման դիպչում էին նրա ականջին: Եւ Աննայի հեկեկանքի մէջ նա լսում էր իր մայրիկի վերջին ձիչը... Բունը աչքիցը փախաւ:

«Այդպէս ուրեմն. քեռին էլ ոչինչ չունի, և վաղը այս տան մէջ հաց էլ չի լինի, միւս օրը՝ նաև կարտօֆիլը... Իսկ եթէ քեռին չըլինէր, թաթարները ինձ կըսպանէին...»:

Եւ Միհրանի փոքրիկ գլուխը այրւում էր, նա չըզիտէր թէ ինչ անի: Հասկանում էր, որ մի բան պիտի անի, բայց ի՞նչ, ի՞նչ:

Նա կամացուկ երեսը դարձրեց դէպի պատը, կուշ եկաւ անկողնի մէջ և դրեթէ դողում էր ամբողջ մարմնով:

Միհրանի մօտ էին աստղիկների վաճառումից հաւաքւած փողերը: Այն միտքը, թէ ինքը փող ունի, իսկ քեռին նեղութեան մէջ է, հանգիստ չէր տալիս նրան:

Իսկ եթէ այդ հաւաքած փողը մի կերպ տայ քեռուն... Իսկ եթէ այդ հաւաքած փողը մի կերպ տայ քեռուն... Բայց Չէ, այդ փողը իբրանը չէ միայն, դա և Սուրբիկինն է... Բայց

չէ որ քեռին Սուրբիկի հայրիկն է... Ի՞նչպէս անի, որ քեռին չիմանայ: Որ իմանայ՝ կարգելի աստղիկներ վաճառելը և այն ժամանակ էլ երբէք ատրճանակ չեն ունենայ:

Իսկ քանի՜ անգամ իրեն թւացել էր թէ արդէն գնել են ատրճանակը և թէ զգում է՝ սեղմում է նրա կոթը իր բարձի տակ...

Մօրաքոյրը պառկեց, քեռին էլ արդէն հանուում էր, իսկ Միհրանը չը գիտէր թէ ինչ վճռի:

Քեռին լամպը հանգցրեց. նա էլ պառկեց: Բայց չէր քնած. Միհրանը ականջ էր դնում նրա հառաչներին և անհանգիստ շուռ ու մուռ գալուէն: Վայրկեանները ժամեր էին թւում: Բազրատի շնչառութիւնը հետզհետէ կանոնաւորում և հանգստանում էր. երբեմն խումփոց էր դուրս թռչում, նորից հառաչ, նորից շուռ ու մուռ գալ:

Վերջապէս Բազրատի խումփոցը կանոնաւոր դարձաւ. նրան պատասխանում էր Յիրօի խումփոցը Միհրանի մահճակալի տակից: Միհրանը էլի մի քանի բոպէ սպասեց: Վճիռը պատրաստ էր, և նա կամացուկ ետ քաշեց վերմակը ու նստեց մահճակալի վրա:

Նա քաշեց իր անդրավարտիկը, որ պահում էր բարձի տակ, և սկսեց որոնել գրպանը: Այդ գրպանի մէջ մի քանի թղթերի ու փալանների մէջ փաթաթած՝ պահած էր իրանց դրամագլուխը, ատրճանակի փողը: Նա զգուշութեամբ հանեց դրամները, որ չը գրնգան, և ամուր սեղմեց բոունցքի մէջ: Ապա իջաւ մահճակալի վրայից և սկսեց չորեքթաթ առաջ գնալ, գրեթէ սողալով յատակի վրա: Այդ բոպէին երեխայի սիրտը սաստիկ բաբախում էր և ձեռներն ու ոտները այնպէս էին դողդողում, որ նրան թւում էր թէ չի հասնի մինչև թախտը: Վերջապէս նա մօտեցաւ այն տեղին, որտեղ աթոռի վրա դրած էին Բազրատի շորերը: Նա կամացուկ վերցրեց վերևից ձգած անդրավարտիկը և էլ չիմացաւ թէ ինչպէս գտաւ գրպանը և փողերը կոխեց նրա մէջ:

Այդ միջոցին Աննան հազաց: Միհրանը վախից ցնցեց և


մի կերպ ձգելով անդրավարտիկը առաջայ տեղը՝ կծկւեց, կռացաւ ու գրեթէ կպաւ յատակին աթոռի տակ: Շունչը կտրած՝ նա մնաց այս վիճակի մէջ, ինչպէս իրան թւաց, երկար ժամանակ, և վերջապէս համոզւելով, որ ոչ ոք չի գարթնել, նա սողեսող կրկին ետ դարձաւ իր մահճակալի մօտ, յոգնած ու գրեթէ ուժասպառ, փաթաթեց գլխով վերմակի մէջ ու աշխատեց քնել...

Միւս օրը Բազրատը ամենից շուտ գարթնեց: Նայելով ժամացոյցին, նա սկսեց շտապ-շտապ հագնւել: Հագաւ գուլ-



պաները, կօշիկները, յետոյ վերցրեց անդրավարտիկը, բայց դեռ կարգին չէր բարձրացրել՝ փողը գրպանում գրնգաց: Նա զարմացած ականջ դրաւ և դիտմամբ թափ տւաւ անդրավարտիկը. փողը աւելի գրնգաց: Այն ժամանակ նա ձեռքը արագ կոխեց գրպանն ու հանեց մի բոուր սպիտակ փող: Երկար ժամանակ նա ապշած անդրում էր դրամները և շուրջը նայելով՝ կարծես ուզում էր ստուգել՝ երազ հօ չէ՞ այդ: Վերջը նա սկսեց երեսը խաչ հանել, կամացուկ շնչալով:

—Տէր Աստուած, Տէր Աստուած, որտեղից են սրանք:



Յետոյ մի քիչ մտածելուց յետոյ նա սկսեց զարթեցնել կնոջը:

—Ա՛ննա, Ա՛ննա:

Կինը սարսափահար բարձրացրեց գլուխը:

—Ասա՛, սրտեղից են այս փողերը իմ գրպանի մէջ:

—Ի՞նչ ես ասում, ի՞նչ փող: Խելքդ կորցրե՞լ ես, ի՞նչ է:

Այս ասելով նա արագ նստեց տեղերում:

—Ի հարկէ, մարդ խելքը կըկորցնի: Տես, էս ի՞նչ փողեր են:

Եւ նա արծաթ դրամները թափեց վերմակի վրա:

Աննան սկսեց շտապ-շտապ հաշուել այդ մանր դրամները— 6 ը. 75 կոպէկ էր: Այդ փողը նրանց համար այդ ըոպէին ահագին գումար էր:

Երկար ժամանակ մարդ ու կին, իրենց անկողնի մէջ նըստած, լուռ մտածում էին, ու ոչինչ չէին կարողանում հասկանալ:

Նրանք որոշեցին ոչինչ չասել երեխաներին:

Այդ օրը Միհրանը իրան մեղաւոր էր զգում Սուրիկի առջև. նա իրան ասում էր, որ իրաւունք չունէր այդ փողը կարգադրել մենակ, քանի որ երկուսին էր պատկանում: Ծանր վարանումից յետոյ նա վճռեց վերջապէս որպէս մեծ գաղտնիք հաղորդել ամեն ինչ Սուրիկին: Սակայն Շուշիկին նա վախեցաւ որեւէ բան յայտնել, չըլինի՞ թէ նա գաղտնիքը բերանից թռցնի:

Սուրիկը լսում էր Միհրանի խոստովանութիւնը՝ յօնքելը կիտած և աչքերը գետին յառած. յետոյ նա սեղմեց Միհրանի ձեռքը և նրան ոչինչ չասելով՝ դուրս փախաւ տնից: Նա ուզում էր մենակ մնալ. նա այդ ըոպէին միայն զգաց թէ ինչ նեղ դրութեան մէջն է հայրը, և ինքը կարծես ամաչում էր Միհրանից որ իրենք աղքատ են, ոչինչ չունեն, ոչինչ: Օ՛, նա չէր ուզենայ որ այդ մասին գիտենար Միհրանը:

Միհրանը նրան գտաւ ս. Դաւթի սարի կատարին իրենց սիրած քարի վրա նստած և կարծես հասկանալով թէ ինչ է կատարում իր ընկերոջ հոգու մէջ, սեղմ նստեց նրա կողքին: Յիբօն էլ իր գլուխը դրաւ Սուրիկի ուսին և իր տաք շնչով շոյում էր նրա երեսը:

Սուրիկը զսպեց աչքին երևեցած արտասուքը, և մի անդուսպ ցանկութիւն ունեցաւ գրկելու Միհրանին:

Նրանք խօսում էին մի քանի ժամ: Այլ ևս ատրճանակ դնելու մասին չէին երազում նրանք: Ինչպէս երկու հարազանները՝ նրանք մի զգացմունք դարձած ծրագրում էին, թէ ինչպէս այնուհետև աշխատեն աւելի վաստակել և ինչպէս այդ դրամը ծածուկ միշտ դնեն հայրիկի գրպանը: Եւ հենց այդ գաղտնապահութիւնը յափշտակում էր նրանց:

Այդ օրից չարգախի արհեստանոցը աւելի ևս սիրելի դարձաւ նրանց համար: Նրանք ոգևորւած աշխատում էին: Շուշիկը շարունակում էր նրանց օգնել, և յաճախ աղաչում-պաղատում էր, որ իրան էլ ասեն թէ ինչի մասին են իրար հետ

փսփսուամ: Բայց տղաները իրարից խօսք էին առել նրան ոչինչ
չը յայտնել:

Երբ կրկին բաւականին փող հաւաքւեց, նրանք առաջւայ
պէս կէս գիշերին դրին հայրիկի գրպանը:

Բագրատը այս անգամ աւելի ապշած՝ չը կարողացաւ իր
զարմանքը ծածկել երեսաներից: Միհրանն ու Սուրիկը իրենց
տեղերում նստած իրար նայեցին և սաստիկ կարմրեցին: Ան-
նան և Բագրատը սակայն այդ չը նկատեցին. նրանց մտքով
երբէք չէր անցնի թէ այդ հրաշքի պատճառը դրանք են:

Այդ գիշերից յետոյ Բագրատը սկսեց ցերեկը քնել և գի-
շերը աշխատել արթուն մնալ և եթէ քնում էլ էր, ամենա-
չնչին աղմուկից վեր էր թռչում և չորս կողմը նայում:

ԳԼՈՒԽ Փ.

Փ ը Ր Ա Ս Ն Բ

Միհրանը որոշել էր արդէն երրորդ անգամ կատարել իր
գիշերային ճամփորդութիւնը: Նա լարւած սպասում էր, որ
բոլորը պառկեն: Եւ ահա այն ըոպէին, երբ իրան թւաց թէ
քեռին ամուր քնած է, նա ետ ձգեց վերմակը, իջաւ յատակի
վրա և սկսեց սովոր ուղղութեամբ առաջ գնալ դէպի Բագրա-
տի շորերի աթոռը: Եւ հենց այն ժամանակ, երբ նա գրեթէ
մօտեցել էր աթոռին և ձեռքը մեկնել դէպի անդրավարտիկը,
նրա և աթոռի միջև անցաւ մի մեծ և փափուկ բան: Դա Յի-
բօն էր, որ ուզենալով իմանալ թէ այդ ո՞ւր է ահա երրորդ
անգամը գնում իր սիրելի տէրը և ի՞նչ է անում նա այնտեղ,
վեր էր կացել իր մշտական տեղից ու ընկերացել Միհրանին:
Նա պոչը գզւանքով թափահարելով՝ մի երկու անգամ կանո-
նաւոր զարկեց Բագրատի թախտին, — և Բագրատը զարթնեց:

Միհրանը դողաց և ամբողջ մարմնով կպաւ գետնին: Բագ-
րատը տեղից վեր թռաւ, կռացաւ ու ամուր բռնեց նրան:
Սպիտակ դրամները թափւեցին տղայի ձեռքից և զիւ զընգոցով
զլորւեցին յատակի վրայով:

— Ա՛ն, բռնւեցիր... Վերջապէս:

Միհրանը ատամները սեղմել էր և լուռ էր: Աղմուկից
զարթնեց և Աննան:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, — հարցրեց նա շնջալով, վա-
խենալով զարթեցնել երեսաներին:

— Ի՞նչ է պատահել: Մոմը վառի: Տեսնեմ՝ ո՞վ է:

Կուցկին չըխկաց ու մէկ անգամից լուսաւորեց սենեակը,

լուսաւորեց յատակին չորած Միհրանին, շապկանց, ոտաբուրիկ...

Բագրատը շճած էր:

—Ո՞րտեղից... հրտեղից են քեզ այս փողերը,— արտասանեց նա խուլ ձայնով:

—Վեր կաց, վեր կաց, իմ տղայ,— կռացաւ Աննան դէպի Միհրանը, կարեկցաբար նրա աչքերի մէջ նայելով և նրա դէմ-



քի անասելի սոսկումը նկատելով:

—Ո՞րտեղից են քեզ այս փողերը,— արդէն սպառնալից կերպով կրկնեց Բագրատը:

—Բաւական է, լո՛իր. թող որ ուշքի գայ,— մէջ մտաւ Աննան, և արագ ծածկեց նրան իր վերմակով:

—Եթէ սա գողանում է... Երգւում եմ քեզ, ես սիրում եմ սրան իմ Սուրբիկից ոչ պակաս... Բայց եթէ ճշմարիտ որ գողանում է...

—Սուտ է, սխալւում ես, Միհրանը չի կարող գող լինել, —ասաւ Աննան վստահաբար ու գրկեց տղային: Միհրանը սեղմւեց նրա կրծքին ու սկսեց դառը հեկեկալ:

—Տեսնում ես՝ ինչ արիւր, տեսնում ես՝ ինչ արիւր,— կըրկնում էր Աննան: Այդ միջոցին Սուրբիկը, որը չէր քնած և այս ամենին վկայ էր, լսելով իր ընկերոջ հեկեկանքը, էլ չը դիմացաւ, վեր թռաւ անկողնից և արտասաւախառը ձայնով կանչեց.

—Հայրիկ, իմ հայրիկ ջան, մի բարկանա Միհրանի վրա, մի վշտացնի նրան: Նա բարի, լաւ, ազնիւ տղայ է: Նա գիտէր որ դու փող չունես, այնպէս տանջւում էր, այնպէս մաշւում... Փողը նա չէ գողացել, Աստուած վկայ, չէ գողացել: Ես քեզ կը պատմեմ, մի բարկանա, կը պատմեմ: Լսիր:

Ու շտապ շտապ նա սկսեց մէկ մէկ պատմել ամենը, ըսկզբից, հենց այն օրից, երբ իրենք որոշեցին ատրճանակ գնել և թէ ինչպէս աստղիկներ էին շինում ամենքից ծածուկ, և ինչպէս օրեր էին համարում թէ երբ կունենան ամբողջ հարկաւոր գումարը, և ինչպէս այդ գումարը Միհրանը դրեց հայրիկի գրպանը մի գիշեր:

Աննան լսում էր որդու խօսքերը և կրկնում.

—Ախ, իմ լաւ զաւակներ: Ախ, իմ անսլշ տղաներ...

Բագրատը մի սարսափելի բան էր զգում այդ ժամանակ. ամենահակասական զգացմունքները յուզում էին նրա հոգին: Նա և խղճահարւում էր, որ այնպէս վիրաւորել էր տղային, և միևնոյն ժամանակ ամաշում էր նրանից, իր երեխայից, իր միևնոյն ժամանակ ամաշում էր նրանից, որ ստիպւած է իր տունն ալինջից, որ այնտեղն է հասել, որ ստիպւած է իր տունն առած օտար, որը երեխայի վաստակով ապրել. միևս կողմից՝ ուստի, որը երախտագիտութիւն էր զգում դէպի այդ փոքրիկը...

—Տեսնում ես, Բագրատ. ասում էի քեզ, որ սխալւում ես, Միհրանը վատ բան չի անի: Հանգստացիր, տղաս, հանգստացիր... Բեռին քեզ անշափ սիրում է. դու չը գիտես՝ ինչքան նա քեզ սիրում է: Արի, Բագրատ, արի, համբուրիւր սրան:

Եւ չը սպասելով որ ամուսինը մօտենայ՝ ինքը սկսեց ջերմ ջերմ համբուրել տղայի աչքերը, շրթունքները, այտերը, ճակատը, համբուրել նրա ձեռների ճարպիկ մատիկները...

Իսկ Բագրատը գլուխը ցած գցած՝ կողքին կանգնած էր և յետոյ կամացուկ քաշեց նրան դէպի ինքը, դրկեց և համբուրեց նրա ճակատը և արտասանեց.

—Ներքի ինձ, Միհրան, ես չըգիտէի, որ դու այդպէս լաւն ես:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅՈՅՍԻ ՄԻ ՆԵՈՅԼ

Հենց որ տեղեկութիւն ստացւեց, որ Բագրում մի քիչ խաղաղութիւն է տիրում, տիկին Մարիամը ճամփայ ընկաւ և այդ քաղաքը գալուն պէս՝ շտապեց խմբագրատները յայտարարութիւններ տալու համար: Մի քանի օր անցաւ, և ոչ տարարութիւններ տալու համար: Մի քանի օր անցաւ, և ոչ մի տեղից ոչ մի մխիթարական լուր: Երբեմն տիկինը մենակ շրջում էր փողոցներում, յոյս ունենալով, որ մանուկների խմբերի մէջ կը գտնի իր Միհրանին, ամեն մի անցնողի հետ աշխատում էր խօսել և հարց ու փորձ անել, բայց այդ ամենը զուր էր:

Մի օր, բոլորովին յուսահատւած, նա նստած էր հիւրանոցի սենեակում, լրագիրներին ծանուցումներն ու յայտարարութիւնները աչքի անցնելով, և չը նկատեց, ինչպէս ներս մտաւ ծառան ու մի նամակ դրաւ սեղանի վրա նրա առջև:

—Տիկին, մի նամակ:

Մարիամը ցնցւեց այդ անսպասելի ձայնից և արագ մեկնեց ձեռքը դէպի նամակը: Հասցէի գիրը անձանօթ էր. բանալով ծրարը նա շտապով կարդաց ստորագրութիւնը—«Շիլֆեան»: Պարոնը գրում էր, որ լրագիրների յայտարարութիւնը կարդալով կամենում է հաղորդել նրան այն, ինչ որ ինքը գիտի տղայի մասին: Պ. Շիլֆեանը գրում էր ի միջի այլոց.

«Այն չարաբաստիկ փետրաւորի վերջերին ես մենակ գալիս էի Պետրովսկ, ուր դրանից մի քանի օր առաջ Բագրից ուղարկել էի ընտանիքս: Վազոնը պռունգէպռունգ լիքն էր: Ես հազիւ կարողացայ տեղ գտնել երրորդ կարգի մի միջանց-

քում: Հենց որ գնացքը տեղից շարժւեց, վագոնի միւս ծայրում լսեց մի տղայի սրտակտուր հեկեկանք: Բոլոր պասսաժիրներս նրա կողմը դարձրինք մեր ուշադրութիւնը և չէինք հասկանում նրա հեկեկանքի պատճառը: Այն ժամանակ մեզ ասացին, որ տղայի ծնողները՝ հայրն ու մայրը, սպանել են Բագուում կոտորածի ժամանակ և նա որբ է մնացել. սրան ապաստան է տւել մի օտար ընտանիք: Տղան՝ գլուխը բարձի մէջ թաղած՝ դառը լաց էր լինում: Հագին ունէր բաց դարչնագոյն կոստիւմ, կարմիր նշան ձախ թևի վրա կարած, վզին փաթաթած մետաքսէ կապոյտ շալ, գլխարկը՝ կարծեմ մի հասարակ սև գդակ էր, եթէ չեմ սխալուում»...

—Նա է, նա է, իմ Միհրանը, — ճշաց խեղճ մայրը: — Նա է, իմ յոյսը, իմ ապաւէնը, իմ ամեն ինչը:

Բայց յանկարծ յիշեց որ Միհրանը ունէր ոչ թէ սև գդակ, այլ լայն եզրներով մի գլխարկ (շլեպ) ու սկսեց մտատանջութեան մէջ ընկնել:

«Այն ընտանիքը, որի հետ գնում էր այդ տղան, աշխատում էր տղային մխիթարել, մանաւանդ մի փոքրիկ աղջիկ, և ես համոզւած եմ՝ նրանց տանը այդ տղան պիտի գտնի և սէր, և զգւանք: Երկար հարց ու փորձ անել այդ տղայի մասին ես չըկարողացայ, որովհետև Բալաշարի կայարանում ես վագոնից իջայ Պետրովսկի գնացքը նստելու, իսկ նրանք վագոնի մէջ մնացին: Եթէ այդ տղան ձեր որդին է, որոնեցէք նրան Անդրկովկասեան գծի ուղղութեամբ, նախ քաղաքներում, ապա մեծ գիւղերում, որովհետև այն ընտանիքի հայրը, որի հետ նա գնում էր, առևտրական էր երևում և անշուշտ մի տեղ կամ նոր առուտուր է սկսել, կամ որևէ գործարան է մտել ծառայելու: Այնչափ գոհ կը լինեմ, եթէ իմ այս տեղեկութիւնով գտնէ մի քիչ օգնած կը լինեմ Ձեզ՝ Ձեր որդուն գտնելու: Ես էլ հայր եմ, ես էլ տեսել եմ սարսափելի կոտորածը»:

Նամակի տակը գրած էր Շիրքեանի հասցէն: Տիկին Մարիամը մէկ, երկու, մի քանի անգամ նորից և նորից կարդաց

նամակը և խելագարի պէս տեղից վեր թռչելով՝ սկսեց գլխարկը դնել, վերարկուն հագնել և միևնոյն ժամանակ շղաձգօրէն հուպ տալ ելէքտրական զանգի կոճակը: Ծառան շտապով ներս մտաւ:

— Կանք, շուտով կանք, ես գնում եմ Պետրովսկի, իրերս այստեղ կը մնան: Շուտով:

Տիկինը այնպիսի ձայնով կանչեց, որ ծառան առանց մի վայրկեան կորցնելու վազեց դուրս:

Մարիամը էլ չիմացաւ, ինչպէս կառքը նստեց, կայարան հասաւ, տոմսակ առաւ դէպի Պետրովսկի և նստեց վագոն: Նրան թւում էր թէ գնացքը կրիայի պէս է գնում. թւում էին յաւիտենական այն ըռպէները, որ նա կանգ էր առնում կայարաններում, ամեն վայրկեան մօտենում էր պատուհանին և աշխատում կարգալ կայարանի անունը...

— Կանգուկտոր, Պետրովսկը շոտ է լինելու...

— Մի կայարան ևս կայ, տիկին:

Մարիամը կպաւ դռնակին, դուրս հանեց գլուխը պատուհանից և ձգտում էր առաջ նայել, մթութեան մէջ ջոկել կայարանի լապտերը, քաղաքի ճրագները: Նա պատրաստ էր դուրս թռչել և վազել առաջ և առաջ...

Վերջապէս գնացքը կանգ առաւ: Մարիամը դուրս ցատկեց վագոնից և գլխապատառ ընկաւ դէպի ելքը:

— Սադովայա, տուն համար տասը, — կանչեց նա կռահականին:

Շիրքեանի ընտանիքը շատ զարմացած և շփոթւած էր, երբ, արդէն ժամը 11-ը անց, լսեց զանգի սաստիկ քաշոց: Աղախինը վախվխելով իջաւ և մի վայրկեանից յանձնեց պարոնին Մարիամի այցետոմսը:

— Ընդունիր: Խնդրիր այստեղ:

Մարիամը արագ ներս մտաւ՝ գլխից մինչև ոտ սևեր հագին:

— Ես ստացայ ձեր նամակը, պ. Շիրքեան, և ահա այս-

տեղ եմ: Ասացէք, ասացէք՝ ինչ որ գիտէք դուք այն տղայի մասին:

— Հանգստացէք, տիկին, նստեցէք:

Նւ պարոնը կրկին պատմեց այն, ինչ որ արդէն գրել էր:

— Տիկին, հաւատացնում եմ ձեզ, նա շատ բարի մարդկանց ձեռին է: Դուք նրան կը գտնէք, անպատճառ կը գտնէք:



Նրան ամենքն այնտեղ շատ սիրելիս պիտի լինեն, մինչև անգամ շունը որ մտել էր նստարանի տակ, նա էլ լիզում էր տղայի ձեռները:

— Շոնը... ի՞նչ շուն...

— Այդ ընտանիքի հետ էր մի գեղեցիկ սև շուն, սպիտակ թաթերով, դունչը սպիտակ...

— Յիբօն է, Յիբօն է, — բացականչեց տիկին Մարիամը:

— Ուրեմն ճիշտ որ Միհրանն է եղել, իմ աննման տղան...

Նւ այնքան ամիսների տանջանքներից և այդ օրւայ լարւած ճամփորդութիւնից յետոյ Մարիամը այլևս չը կարողացաւ իրան զսպել և սկսեց հեկեկալ. տիկին Շիլքեանը իսկոյն մտաւ ընդունարան և նստելով Մարիամի կողքին՝ աշխատում էր նրան հանգստացնել: Ապա նրանք սկսեցին մտածել թէ որտեղ կարող է լինել Միհրանը:

— Իմ կարծիքով, տիկին, դուք պէտք է նախ անցնէք Գանձակ, ապա Թիֆլիս, իսկ եթէ այնտեղ էլ տղային չը գտաք, գնաք Բաթում: Շուշի գնալը միտք չունի. այնտեղ էլ ընդհարումներ են տեղի ունեցել թուրքերի և հայերի մէջ:

Այդ գիշեր տիկինը մնաց Շիլքեանների տանը, իսկ միւս առաւօտ շտապեց Բագու և այնտեղից Գանձակ: Նա գուր էր դիմում ոստիկանական բոլոր մասերին՝ հարցնելով թէ չը գիտեն արդեօք մի հայ ընտանիք, որ տեղափոխւել է Բագուից այդտեղ՝ հայր, մայր, երեք երեխայ և հետները մի սև շուն՝ թաթերը սպիտակ: Այնտեղ նա շատ շուտով համոզեց, որ այդպիսի ոչ մի ընտանիք չէր եկած այդ քաղաքը, ուստի շտապեց դէպի Թիֆլիս:

Այստեղ նա նախ և առաջ կրկին դիմեց ոստիկաններին, բայց ոստիկանները այդ օրերը այնքան գործ ունէին, որ ոչ մի ճիշտ տեղեկութիւն նրանք չէին կարող տալ: Նրա որոնած ընտանիքի նման մի քանիսը կային, և տիկին Մարիամը առաւ նրանց հասցէները և այցելեց նրանց: Զուր որոնումներ: Նա տեղական բոլոր լրագիրների մէջ էլ յայտարարութիւններ տը պագրել տաւ, և օրական մի քանի անգամ վերադառնում էր հիւրանոց հարցնելու՝ ոչ ոք հօ չէ՞ եղել, իրան հօ մարդ չի՞ հարցրել: Զուր սպասումներ:

Հաստատ համոզւած լինելով, որ Միհրանը կենդանի է և որ նա անպատճառ երկաթուղու գծից ոչ հեռու ապրելիս պիտի լինի, նա այժմ օրէցօր աւելի ու աւելի անհամբեր էր դառնում: Երբեմն փողոցով անցնող ելէքտրաքարշի վագոնի մէջ երբ Միհրանի նման մի տղայ էր երևում իր աչքին, — նա

վազում էր վագոնի ետևից, կառք էր նստում, հասնում, և յուսախաբ ետ դառնում:

Նա շատ անգամ թափառում էր հեռաւոր փողոցներում, ամեն մի երեխայի առջև կանգնելով և գծերը զննելով: Մի օր մի խումբ շներ նրա մօտից վազեցին, հալածելով մի սև շուն, որ բերանում փռուան աստղիկներով փայտիկը բռնած՝ արագ սլանում էր: Յանկարծ շունը կանգ առաւ, մի բոպէ ետ նայեց, ձգեց փայտը սալայատակի վրա ու ցատկեց տիկին Մարիամի կողմը:

Տիկինը աղաղակելով մի կողմ քաշւեց, մի ան որդ ձեռնափայտով զարկեց շանը և սկսեց քշել նրան: Խեղճ շունը պոչը իրան սեղմելով, ողբալի մըգստում էր մի կողմ քաշւած, բայց շարունակ ձրգւում էր դէպի որբ տիկինը:

Մարիամը յանկարծ ճանաչեց Յիբօին, իր Միհրանի շանը, վազեց դէպի նա, իսկ շունը յարձակեց նրա վրա, բարձր վեր էր թռչում գրեթէ մինչև նրա դէմքը, ետևի ոտքերի վրա էր կանգնում, աչքերին նայում, ուրախ մըգստում:

— Յիբօ, Յիբօ, դ՞ու ես,

դ՞ու: — Ու տիկին Մարիամը գրկեց շան գլուխը ու սկսեց համբուրել, իսկ Յիբօն լիզում էր նրա ձեռները, այտերը...

Անցորդներից մի քանիսը կանգ առան՝ այս տեսարանը դիտելու համար...

— Յիբօ, — հեռուից լաւեց Սուրբիկի ձայնն և սուր սուրօցը, — Յիբօ...

Շունը դուրս պրծաւ Մարիամի գրկից ու վազեց դէպի տղան, որը հեռում կանգնել էր աստղիկները ձեռքին: Մարիամը կարծեց թէ դա Միհրանն է և գրեթէ վազէվազ դիմեց նրա կողմը, բայց շուտով նկատեց, որ սխալւել է և յուզւած հարցրեց:

— Սիրուն տղայ, ասա ինձ՝ ի՞նչպէս է այս շունը ձեզ մօտ ընկել:

Սուրբիկը զարմացած նայեց լաւ հագնւած տիկնոջը:

— Ոչ, այս շունը իմը չէ...

— Ո՞ւմն է ապա, ասա, շուտով ասա:

— Միհրանինն է:

— Ի՞նչպէս, դու ճանաչում ես Միհրանին, — և Մարիամը ուզեց բռնել Սուրբիկի ձեռքը և դէպի ինքը քաշել: Բայց Սուրբիկը վախեցած ետ-ետ գնաց:

— Ո՞րտեղ է Միհրանը, որտեղ է իմ տղան: Յոյց տուր շուտով... ես Միհրանի մայրն եմ:

— Սուտ է, նա մայր չունի, Միհրանի հօրն ու մօրը թուրքերը սպանեցին. հայրիկս իր աչքով տեսել է, — ասաւ Սուրբիկը, աշխատելով հեռանալ Մարիամից:

— Տար ինձ նրա մօտ, նա ինքը քեզ կասի, — բացականչեց տիկինը:

Սուրբիկը մի բոպէ տատանւեց, բայց յետոյ կտրական կերպով ասաւ.

— Ոչ, ես չեմ տանի ձեզ, դուք սուտ էք ասում. դուք երևի ուզում էք մեզանից Միհրանին խլել, բայց մենք չենք թողնի, չէ: Հայրիկն էլ, մայրիկն էլ չեն թողնի. մենք նրան շատ ենք սիրում, ոչ ոքի չենք տայ: Յիբօ, Յիբօ:

Ու Սուրբիկը արագ վազեց Մարիամի մօտից, շարունակ կանչելով «Յիբօ, Յիբօ»...

— Կանգնիր, կանգնիր, — ճշում էր Մարիամը, բայց Սուրբիկը մտաւ մի նեղ փողոց ու աչքից անյայտացաւ:

Յիբօն մէկ երկու անգամ վազեց ետ, դէպի Մարիամը ու նորից հետևեց Սուրբիկին: Մարիամը շտապեց դէպի այն

փողոցը, ուր մտաւ Սուրիկը, և վերելքից ու յուզմունքից հե-
ւալով՝ աշխատում էր տղայի հետքը չըկորցնել: Երբ այն փո-
ղոցը ծռեց, նա նկատեց, որ Յիբօն կանգնել է փողոցի հա-
կառակ ծայրին ու մէկ իր կողմն է նայում, մէկ ետ: Մարի-
ամը չէ թէ գնում, այլ թռչում էր առաջ, և երբ հասաւ փողոցի
վերին անկիւնին, աջ ու ձախ նայեց— ոչ ոք չը կար, ոչ Սու-
րիկը, ոչ Յիբօն: Նա մի երկու քայլ էլ առաջ գնաց և ուժաս-
պառ ընկաւ մի դռան առջև քարէ սանդուխտի վրա և մի
քանի րոպէ չէր կարողանում ուշքի գալ: Բայց յանկարծ նա
իր մօտ դգաց մի տաք շունչ— աչքը բանալով նա տեսաւ, որ
Յիբօն է իր ձեռները լիզում:

Մարիամը փաթաթեց շանը, գլուխը դրաւ նրա մէջքին,
ու մի երկու վայրկեան այդպէս մնաց. ապա նա սկսեց խօ-
սել:

— Յիբօ, իմ Յիբօ, ուր է Միհրանը, առողջ է Միհրանը,
ո՞րտեղ է մեր Միհրանը...

Եւ ամեն անգամ, երբ արտասանում էր «Միհրան» բա-
ռը, Յիբօն քնքուշ փնգստում էր: Վերջը շունը դնելով իր մի
թաթը տիրուհու ծնկանը՝ սկսեց նրա երեսին նայել և հաչել,
կարծես ասել էր ուզում:

— Հանգստացիր, նա ողջ է, առողջ է:

Ապա Յիբօն վեր կացաւ տեղից, առաջ վազեց ու ետ դար-
ձաւ, յետոյ նորից առաջ վազեց և ետ դարձաւ, ու՛ տեսնելով
որ տիկինը իրան չի հասկանում, նա բռնեց տիրուհու զգեստի
փեշից ու սկսեց քաշել: Անգիտակցաբար գնում էր Մարիամը
նրա ետևից, աշխատելով ետ չըմնալ: Երկար նրանք բարձրա-
նում էին նեղ և ծուռ փողոցներով. Մարիամը երբեմն կանգ
էր առնում շունչ քաշելու համար և ապա նոր և նոր ուժով
առաջ ընկնում:

Վերջապէս նրանք— Յիբօն ու Մարիամը կանգնեցին մի
տան դռան առջև: Մարիամը յուզւած բաց արաւ դուռը և մտաւ
բակը:

Աննան այդ րոպէին լւացք էր անում խոհանոցում: Հսե-
լով փողոցի դռան ճռուցը, նա դուրս նայեց:

— Ո՞ւմն էք կամենում, տիկին:

— Ասացէք խնդրեմ, ո՞րտեղ է ապրում Միհրան տղան:

Աննան՝ տեսնելով հարուստ հագնւած գեղեցիկ կնոջը, ա-
րագ իջեցրեց իր թևքերը, որ կշտած էր, և կասկածանքով
հարցրեց.

— Իսկ դուք ի՞նչ կանէք:

— Այստեղ է, ասէք, այստեղ է նա... Ես նրա մայրն եմ,
աղաչում եմ՝ ցոյց տւէք ինձ նրան:

Այդ րոպէին Աննան նկատեց, թէ ինչպէս Յիբօն վիզը ու-
րախ քսում էր տիկնոջ ոտներին, և շատ էր զարմանում այս
բանի վրա:

— Ես հրաշքով աղատեցի, և անա քանի ամիս է որոնում
եմ զաւակիս: Յոյց տւէք ինձ իմ զաւակը. եթէ դուք էլ զա-
ւակ ունէք. գթացէք ինձ: Ո՞ւր է Միհրանը,— աղաչում էր
Մարիամը արտասուքը կոկորդի մէջ խեղդելով:

— Նա մի շաբաթ է, որ տկար էր. այժմ, փառք Աստու-
առողջ է, բայց մենք նրան դեռ սենեակումն ենք պահում.
դուրսը խոնաւ է և ցուրտ: Մտէք ներս, բայց հաւատացած
եմ՝ դուք սխալում էք:

Այդ ժամանակ շեմքին երևացին Բագրատը, Սուրիկն և
Շուշիկը: Սուրիկը բացականչեց.

— Հայրիկ, անա այս կինը մեր Միհրանին ուզում է մեզ-
նից խլել,— ու առաջ ընկաւ, որ Մարիամի ձամփան կարէ,
ներս չը թողնի:

— Ո՞ւր է իմ Միհրանը,— ճչաց յուսահատ և անհամբեր
ձայնով Մարիամը:

Այդ ձայնը լսելով յանկարծ դռան մէջ երևաց Միհրանը...
Եւ մի կողմ մղելով Սուրիկին՝ աղան առաջ նետուեց ու փարեց
Մարիամի պարանոցով՝ աղաղակելով.

— Մայրիկ, մայրիկ:



Պատասխանը՝ Մարիամի ականջ ծակող ճիչն էր՝ ուրախութեան, անծայր երջանկութեան ճիչը...

Անցել էր աւելի քան մէկ ժամ: Մարիամը ուշքի էր եկել և արդէն հանգիստ խօսում էր իր Միհրանի հետ, որը նրա ծնկան նստած՝ մի առ մի պատմում էր իր գլխով անցածը: Պատմում, գրկում էր մօրը և համբուրում, անվերջ համբուրում: Նա ուզում էր շատ բան մէկ անգամից ասել. և թւում էր, թէ ամեն բան ասել է և միևնույն ժամանակ դեռ ոչինչ չէ ասել: Մարիամը հիացած նայում էր նրա դէմքին, որը կարծես մի քիչ կոպտացել էր, բայց արդէն այնքան եռանդ, խելացիութիւն և լրջութիւն էր ցոյց տալիս: Նա նկատելի կերպով մեծացել էր. Յիբօն նստել էր երկուսի առջև և աչքերը նրանցից չը հեռացնելով, վիզը երկարացրած, ականջները վեր

ցցած՝ լսում էր և անշուշտ հասկանում նրանց ասածները, որովհետև ժպտում և գլուխը երբեմն թափ տալով հաստատում էր Միհրանի պատմութիւնը:

Երբ Մարիամը վեր կացաւ և Միհրանի ու Յիբօի հետ պատրաստում էր այդ տանից հեռանալու, Միհրանը մէկ մէկ գրկեց իր «եղբօրն ու քոյրիկին», «մօքիւրին և քեռուն»: Նա մի րոպէ տխրեց, որ պիտի բաժանէր դրանցից. Յիբօն էլ գլուխը կախել էր, ականջները ցած գցել:

Մարիամը նկատեց այդ.

— Քանի այստեղ ենք՝ Միհրանը յաճախ կը գայ ձեզ մօտ, դուք էլ յաճախ եկէք մեզ մօտ, մեր հիւրանոցը:

Աննան վեր բարձրացրեց Միհրանին, սեղմեց իր կրծքին երկանր, երկանր, ապա ջերմ համբուրեց նրան ու տալով նրան Մարիամին՝ շնջաց.

— Մինչև այսօր ես ունէի երեք զաւակ, հիմա էս մէկը տալիս եմ ձեզ:

Մարիամը ոչ մի խօսք չը գտաւ Աննային պատասխանելու: միայն ամուր սեղմեց նրա ձեռքը:

Միհրանը իր մօր հետ էր հիւրանոցում, բայց նրա ուշքն ու միտքը Շուշիկի և Սուրիկի հետ էր: Նա զգում էր այնպէս, կարծես թէ նորից որբացել է, և շարունակ նրանց մասին էր խօսում մայրիկի հետ. Մարիամը նրանից իմացաւ Բագրատի կեանքի մանրամասնութիւնները և սկսեց մտածել, թէ ինչպէս նրան օգնի, ինչպէս նրան ցոյց տայ իր անհուն երախտագիտութիւնը:

Եւ անա յաջորդ օրը, երբ նա Միհրանի ու Յիբօի հետ եկաւ Պետրոսեանների տունը, նա առաջարկեց.

— Լսեցէք, պ. Բագրատ, ես համոզւեցի որ Միհրանը առանց ձեր երեխաների երբէք բախտաւոր չի զգայ իրան, ուստի ձեր երեխաների երբէք բախտաւոր չի զգայ իրան, թէկուզ և ինձ հետ լինի: Ես մեղք եմ համարում բաժանել նրանց, որոնց ճակատագիրը կապել է: Թող ինչպէս այս քանի ամիս նրանք եղել են որպէս քոյր եղբայրներ, այդպէս էլ այս

սուհեակ լինեն, նրանք բոլորն էլ կը կրթւեն միասին, իմ հաշուով:

— Այսինքն ի՞նչ էք ուզում ասել, տիկին: Դուք ուզում էք մեր հարազատ երեխաներին էլ վերցնել տանել. — ընդհատեց Բագրատը մի տեսակ դժգոհութեամբ:

— Ոչ. այլ ես ուզում եմ ձեզ առաջարկել տեղափոխել Հաշտարխան: Գիտեմ, դուք այստեղ պաշտօն չունէք և ոչնչով կապւած չէք այս քաղաքի հետ: Իմ ամուսնու և սկեսուրի մահից յետոյ բոլոր գործերի կառավարութիւնը ինձ վրա է մնացել: Ես շատ յոգնել եմ... Յոյս ունեմ՝ յանձն կառնէք ինձ օգնել Միհրանի համար իր հօր կարողութիւնը պահպանելու, այնպէս, ինչպէս դուք նրա կեանքը փրկեցիք և այսքան ամիս պահպանեցիք: Դուք կը լինէք իմ բոլոր գործերի գլխաւոր կառավարիչը: Համաձայն էք:

Բագրատը կանգնած էր ուրախութիւնից քարացած: Իսկ Աննան բացականչեց.

— Տիկին. ի՞նչպէս կարող ենք հրաժարուել ձեր առաջարկից: Ձեզ Աստուած Ինքն է մեզ ուղարկել:

Եւ մինչդեռ երեխաները ուրախութիւնից չը գիտէին թէ ինչ անեն, որ այլևս երբէք իրարից չը պիտի բաժանուեն, Մարիամը պայմանաւորուում էր Պետրոսեանների հետ, թէ երբ պիտի պատրաստ լինեն ճամփայ ընկնելու...

Կրկին սլանում է երկաթուղու գնացքը, և կրկին Սուրիկը, Միհրանն ու Շուշիկը կողք կողքի նստած են վագոնի մէջ: Ոչ ոք լաց չի լինում, չի հեկեկում. Մարիամն ու Աննան երջանիկ աչքերով նայում են երեխաների պայծառ դէմքերին, Բագրատը ինքնավստահ կարգադրութիւններ է անում:

Մէկը միայն չը կայ նրանց մէջ — դա Յիբօն է: Նրանց թոյլ չը աւին շունը հետները վերցնել վագոնի մէջ, և Յիբօն վանդակի մէջ փակւած, մենակ նստած է բազաժի վագոնում:

Պառկել է վանդակի յատակին, գլուխը դրել թաթերի վրա ու դառը ունում է...

Միհրանը կարծես լսում է այդ ունոցը՝ գնացքի անիւների թրթիկ-թրթիկոցի միջից, տեղաշարժի սուլոցների և պասաժիրների բարձրաձայն խօսակցութեան միջից:

Լսում է և թէև իր դիմաց նստած է մայրիկը՝ գերեզմանից կենդանացած, գտնւած մայրիկը, ու փափուկ մատներով շոյում է իր ձեռքը՝ բայց նա տխուր է...



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

27543

Ձեռք
871

Арм.
13-1279

1914

Գինն է՝ ԿԱԶՄԱԾ 50 ԿՈՊ.

Իմեղ Կովկասի բոլոր զբաղանառանցներին

Պահեստը հեղինակի մոտ՝

Тифлисъ, Сергіевская 20. В. Лисиціанъ.

71

ՀՀ Ազգային գրադարան



NL0396651

9441